

ԱՋՈՐ



ԶՈՒՂՈՒ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԴ ՏԱՐԻ ԹԻՒ 114 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻԿ 2016

Ս Ե Պ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Կ Մ Ե Ն Ա Փ Բ Գ Վ Ե Ա Խ Վ Ա Խ Ե Խ «Ա Կ Ե Ր Ա Խ Ե Ս Շ Ա Մ Հ Ա Լ Ի» Գ Ր Ա Խ Ա Ր Ա Խ



110-ԾՐԵԾԿ

ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԺՈՂՈՎՐԴԻԸ ԲԱՐԻ ԵՐԹ ՄԱՆԹԵՅ ԻՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻԸ

Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ Սպահանի հայոց թեմը թողեց առաջնորդ գերշ. Տ. Բարգեն արք. Չարեան՝ իր ծառայական աշխատանքը Կանադայում շարունակելու եւ սոյն երկրի հայոց թեմն առաջնորդելու համար: Սրբազն Հօրը ողջերթ մաղթելու եւ իր անքասիր ծառայական գործունեութեան առթիւ երախտիքի խօսք ասելու համար՝ հինգշաբթի՝ մայիսի 19-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզարահում կազմակերպել էր բարի երթի երեկոյ:



Միջոցառմանը ներկայ էին՝ Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Արտաշէս Թումանեանն ու նրան ընկերակցող պատկրակութիւնը, Թավրիզից հրակիրեալներ՝ Աստրափառականի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթճեանը եւ Թեմական խորհրդի ատենապետ Ռուբեն Չանանեանը, Թեհրանից՝ Թեմական խորհրդի անդամ եւ Սպահանի հայոց թեմի ժամանակի Թեմական խորհրդի ատենապետ Հրայր Շահնազարեանն ու «Ալիք» օրաթերթի խմբագրական կազմի անդամ Արամ Շահնազարեանը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի եւ Նոր Զուղայի ու Շահինշահրի ազգային մարմինների, միութիւնների, հայոց դպրոցների եւ երգչախմբերի ներկայացուցիչներն ու հոժ ժողովուրդ:



Երեկոյի բացումը կատարւեց հանդիսավար Կարին Տէր-Մարտիրոսեանի ողջոյնի խօսքով, ապա երախտիքի խօսքով ու բարի մաղթանքներով ողողած ելյոթների շարանը մեկնարկեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենա-պետ Վ. Է. Տէր-Մարտիրոսեանի միջոցով, որն արտայալուց թեմի ազգային մարմինների եւ ժողովուրդի անունից: Նա իր խօսքի սկզբում բարի գալուստ մաղթեց հիւրերին, ապա մատնանշելով Սրբազն Հօր մարդկային արժանիքներն ու այն մեծ սէրը եւ յարգանքը, որը վայելել է թեմի ժողովուրդի ու պետական բարձրաստիճան պաշտօնեաների կողմից՝ աւելացրեց. «Սրբազն Հայրը մեզ համար եղել է խսկական հոգեւոր հովիւ: Մեր թեմի խրաքանչիւր անդամ անկախ իր սեռից, տարիքից եւ կրթութիւնից, առիթ է ունեցել հանդիպելով Սրբազն Հօրը, ստանալ նրա խորհուրդները: Նա միշտ փորձել է անձամբ մօտենալ այն ընտանիքներին, որոնք զգացել են իր կարիքը»:



Յաջորդիւ արտայալուց վաստակաշատ ազգային-հասարակական գործի Թաթով Օհանեանը, ով նոյնայէս անդրադառնալով Սրբազն Հօր բարեհամբոյր բնաւորութեանն ու կատարած բոլորանէր աշխատանքներին, շարունակեց. «Որպէս առաջնորդ նա եղել է համեստ եւ հաւաքական աշխատանքի կողմնակից: Նա երբեք իր շուրջ չի կենարոնացրել աշխատանքները. իր ձեռքը չի առել բոլոր դժւարութիւնները, այլ դրանք կիսել է միւսների հետ՝ համոզւած լինելով, որ հաւաքական կեանքով ենք յաջողութիւնների հասնելու: Նա խուսափել է միանձնեայ ղեկավարութիւնից եւ միշտ եղել է ապակենտրոն սկզբունքների վրայ»:

Իրանում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Արտաշէս Թումանեանը եւս արտայալուց այս առիթով: Նա դրաւանքի խօսք ուղեւով համայնքին եւ յատկապէս թեմակալ առաջնորդին ու շեշտելով, թէ նման բաժանման պահերին, ցանկացած մարդու համար միակ սփոփանքը լինելու է

իր կատարած աշխատանքներից առաջացած դրական գգացողութիւնը, աւելացրեց՝ Սրբազան Հօր գործունեութիւնը անգամ եթէ ամենասովորական չափանիշերով գնահատենք, կը գտնենք, որ նա գերակատարել է իր պարտականութիւնները եւ արդար խղճով կարող է անցնել իր այլ ծառայողական գործին:



Պրճ. Թումանեանն արցախեան վերջին իրադարձութիւնների շուրջ համայն հայութեան միասնական կեցւածքի դրսեւորումը, առաջին հերթին հոգեւոր աշխատանքի եւ նման հոգեւորականների ջանքերի արդիւնք համարելով, մեծ միասնականութիւն ու միակամութիւն ցանկացաւ հայ ժողովրդին եւ իր խօսքն աւարտեց Սրբազան Հօրն առողջութիւն ու աշխատանքային կորով մաղթելով:



Խալ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը նոյնպէս միանալով հնչած մաղթանքներին ու դրատանքի խօսքերին՝ ընդգծեց այն հանգամանքը, որ ինքը եւ Սրբազան Հայրը միեւնոյն ժամանակ սկսել եւ աւարտում են իրենց աշխատանքային ժամանակաշրջանը։ Ապա նշելով, որ Հայաստանեաց Առաքելական սուրբ Եկեղեցու միաբանութիւնը միայն հոգեւոր առաքելութեամբ չի զբաղեց եւ իր ուսերին է կրում նաև հայ ժողովրդին ծառայելու առաքինի պարտականութիւնը, աւելացրեց՝ Սրբազան Հայրն իր գործունեութեամբ նման կեցւածքի մարմնացումն է եղել։

Պրճ. Բեգլարեանը վկայելով, թէ Սրբազան Հայրը շատ կարճ ժամանակահատածում յաջողեց շահել Սպահան նահանգի եւ Իրանի մակարդակով պետական այրերի վստահութիւնը, համոզում յայտնեց, որ նա ինչպէս միշտ կառաջնորդի իրանահայութեան եւ համայն հայութեան շահերով եւ իր արտայայտութեան համաձայն «Ուր էլ որ իինի, դառնայու է իրանի ոչ-պաշտօնական դեսպանը»։



Յաջորդիւ իր սրտի խօսքն ասաց Աստրպատականի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Եպս. Զիֆթեանը, ով իր ելոյթի սկզբում անդրադարձաւ Անթիլիասի դպրեվանքից մինչեւ այսօր գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի հետ ունեցած համատեղ յուշերին։ Նա Բարգէն Սրբազանի մասին իր վկայութիւնը հաստատեց աւետարանական այն հատուածի մէջբերմամբ, որտեղ Քրիստոն իր աշակերտներից Ս. Բարորուղիմէնս առաքեալի մասին արտավայտել էր հետեւեալը՝ «Ահաւասիկ մի անձ, որի մէջ նենգութիւն չկայ», ապա աւելացրեց, որ Տիրոջ այս խօսքը կարելի է ասել Սրբազան Հօր կապակցութեամբ, քանի որ նա համեստութեան, հեզութեան եւ մարդասիրութեան իսկական օրինակն է։ Աստրտին գերշ. Տ. Գրիգոր Եպս. Զիֆթեանն իր, Աստրպատականի հայոց թեմի ազգային մարմինների եւ բոլոր կառոյցների անունից բարի երթ մաղթեց Սրբազան Հօրը եւ ցանկացաւ, որ Աստուած նրա ճանապարհը միշտ օրինեալ դարձնի։



Եզրափակիչ խօսքը հնչեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբեն արք. Չարեանի միջոցով: Նա սկզբում իր շնորհակալութիւնները յայտնեց երեկոյի կազմակերպիչներին եւ ելոյթով հանդիս եկածներին:



Ապա Արբազան Հայրը առանձնաբար շնորհակալական խօսքեր ուղղեց նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, իր ծնողներին ու հարազատներին, իրանում ՀՀ ներկայ եւ նախկին դեսպաններին ու դեսպանատան անձնակազմին, քոյր թեմերի առանձորդներին ու ազգային մարմիններին, թեմի հոգեւորականաց դասին, ազգային մարմիններին, Հայ Դատի յանձնախմբին, միութիւններին, երգչախմբերին, դպրաց դասին ու եկեղեցներում աշխատող անհատներին, հայոց ազգ. եւ Կիրակնօրեայ դպրոցների պատասխանատուններին, ինչու չէ նաեւ ժողովրդին:



Թեմակալ առաջնորդը հրաժեշտի պահը յուզիչ համարելով՝ աւելացրեց. «Ինչպէս զինուորը պատրաստ է պատերազմի դաշտ գնալ՝ որպէս մարտիկ իր հայրենիքի սուլրը հողը պաշտպանելու, նոյնպէս էլ Հոգեւոր զինուորը ծառայական դաշտում պէտք է լինի իր ժողովրդի կողքին՝ նրանց կարիքներին գոհացում տալու համար»: Նա իր ուրախութիւնը յայտնելով, որ անցնող 12 տարիների ընթացքում նման ժողովրդի սպասաւորն ու ծառան է եղել, ժողովրդին պատգամեց՝ ինչպէս միշտ միասնական ոգով համախմբւել թեմի նոր առաջնորդի ու ազգային մարմինների շուրջ՝ համանքն աշխոյժ եւ բարգաւաճ պահելու նիրական առաքելութիւնը

իրականացնելու համար, մասնակից դառնալ եկեղեցական կեանքին, ինչպէս նաեւ համայնքային ու համագոգային ծրագրերին եւ զօրավիգ կանգնել հայրենիքին:



Ծրագրում ընդգրկված էր նաեւ գեղարվեստական յայտագրով ծրագրի՝ յագեցած հայաշունչ պարով, ասմունքով ու երգով:



Գեղարվեստական կատարողներն էին՝ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կոռունկ» ասմունքի խմբի աւագ անդամութիւններ՝ Լեռնիկ Շատուրեանն ու Մանիա Ղուկասեանը՝ Ռիմա Սիմոնեանի գեղարվեստական դեկավարութեամբ, Շոյն միաւորի «Կոռունկ» պարախումբը պարուսոյց Նունէ Մկրտչեանի պատասխանատութեամբ, Ա.Ա. վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ Համիկ Ալեքսանդրեանի խմբավարութեամբ, Ա.Ա. վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մեներգիչներ՝ Վանա Շիրացեանը, Թանիա Մինասեանն ու Հարմա Կարապետեանը եւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ Արմեն Ամիրիսանեանի դեկավարութեամբ:



**ԳԵՐԸ. Տ. ԲԱԲՔԵՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԻ ՀՐԱԺԵԾՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԵՐԻ ՀԵՏ**



Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի 61-րդ հաջետու Ծիստի ընթացքում թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբքեն արք. Չարեանի ներկայացրած հրաժարականի հաստատումից յետոյ, կազմակերպեցին հրաժեշտի հանդիպումներ Սպահանի նախաճգային եւ քաղաքային պետական բարձրաստիճան պատասխանատուների հետ:



Թեմակալ առաջնորդը, ընկերակցութեամբ Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի Դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների առենապետեր պրնք. Վարուժ Մինասեանի, Վրէժ Տէր-Մար-

տիրոսեանի եւ Վարուժ Մովսիսեանի 2016 թականի մայիսի 4, 8 եւ 11-ին հերթաբար հանդիպեց Իրանի խւամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան տնօրէն այաթ. հոշ. դկտ. Առզանին, Սպահանի եւ Իրանի կենտրոնական ու հարաւային շրջանի քանակի ընդհանուր հրամանատար Զեհանին, Սպահանի նախաճգապետ դկտ. Զառգառփունին, Սպահան քաղաքի ընդհանուր եւ 5-րդ շրջանի քաղաքապետեր դկտ. Զամալինեժադին եւ ճրտ. Ասազգադեգանին, Սպահանի ուրբաթօրեայ աղօթապետ հոշ. այաթ. Թարաթարային եւ Սպահանի Քաղխորհըրդի տնօրէն ճրտ. Ամինին:



Հանդիպումների ընթացքում գերշ. Սրբազն Հայրը շնորհակալութիւն յայտնեց պետական պատասխանատուներին անցնող 12 տարիների ընթացքում նրանց տածած ծերմ յարգանքի եւ համագործակցութեան համար: Թեմակալ առաջնորդը շեշտեց, որ ինքը լինելու է Իրանի անպաշտօն դեսպանը՝ ամէն տեղ վկայելու այս երկրում տիրող համակեցութեան եւ համերաշխութեան մթնոլորտի մասին:

Պետական պատասխանատուները տիրութիւն յայտնելով առաջնորդ Սրբազն Հօր մեկնումի առիթով, միաժամանակ նրան յաջողութիւն մաղթեցին՝ իր ապագայի ծառայական կեանքի ու գործունեութեան մէջ եւ իրենց գոհունակութիւնը յայտնեցին անցնող տա-



Իիներում թեմակալ առաջնորդի ջերմ ընդունելութեան եւ բարեացակամ մօտեցումների համար: Նրանք յոյս

յայտնեցին, որ պետական կառուցների հետ գերշ. Սրբազն Հօր զարգացրած փոխ-յարաբերութեան մթնոլորտը նոյն կերպով շարունակելու է ապագայում եւս:



ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԸ. Տ. ԲԱԲԴԵՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԸ ՀՐԱԺԵՆԸ ՏԻԵՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՈՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ



Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբդեն արք. Չարեանն իր առաջնորդութեան շրջանի աւարտին այցելելով Նոր Ջուղայի ազգային հաստատութիւնները ու միութիւններ՝ հրաժեշտ տևեց պատկան մարմինների անդամ-ութիներին:

Այնուհետեւ հիւրընկալելով Հայ Դատի յանձնախմբի կենտրոնում, իր սրտաբուլս մաղթանքները փոխանցեց սոյն յանձնախմբի անդամներին:



Այս շրջագծում հինգշաբթի՝ մայիսի 12-ի առաւոտեան, թեմակալ առաջնորդ Սրբազն Հայրը ներկայացաւ Նոր Ջուղայի ազգային ծերանոց, որտեղ հրաժեշտի հանդիպում ունեցաւ Ն. Ձ. Հայ Կանանց Գթութեան միութեան անդամութիների եւ սոյն միութեան հիմնադրած ու ղեկավարութեամբ աշխատող ազգային ծերանոցի աշխատակազմի ու տարեց բնակիչների հետ:

Շաբաթ՝ մայիսի 14-ի երեկոյեան, թեմակալ առաջնորդը նախ այցելեց Ն. Ձ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութիւն, ուր հանդիպելով միութեան արտօնատիրոջ, կենտրոնական վարչութեան եւ միաւորների վարչութիւնների անդամներին՝ իր հրաժեշտի խօսքն ասաց նրանց:

Սրբազն Հայրը կիրակի՝ մայիսի 15-ին, նախ այցելեց Ն. Ձ. Հայուհեաց բարեգործական ընկերութեան կենտրոն, որտեղ հանդիպեց սոյն ընկերութեան անդամութիներին, ապա Փերիոյ կրթ. եւ Հայ ուս. «Զհարմահալ» միութիւնների կենտրոնատեղիում հանդիպում ունեցաւ զոյգ միութիւնների վարչութիւնների հետ:

Հրաժեշտի հանդիպումների շարանը շարունակեց նաև երկուշաբթի՝ մայիսի 16-ի երեկոյեան, որի շրջագծում գերշ. Տ. Բաբդեն արք. Չարեանը նախ Ս. Ցովհաննու եկեղեցում այցելեց «Օուշամիկ» երգչախմբի եւ Կանանց հոգեւոր լսարանի անդամութիներին, ինչու չէ նաև նրանց պատասխանատու արժն. Տ. Վազգեն քին. Քեօշկերեանին, ապա նախսկին Գիշերօթիկի շենքում հանդիպեց Ս. Ամենափրկչեան վաճքի «Տաթեւ» եւ «Կոմիտաս» երգչախմբերի անդամ-ու-

ჩქარის თუ ჩამოვალების შესახებ: წილი ჩანთების მიზნები და განვითარების სამიზნო დოკუმენტების შესახებ:



ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԵ. Տ. ԲԱԲՔԵՆ ԱՐՔ.
ՉԱՐԵԱՆԻ ՀՐԱԺԵԾԻ ԱՌԹԻՒ ՀՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
ՍՊԱՀԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ



Երկուշաբթի՝ 2016 թականի մայիսի 16-ի յետմիջօրէին, Ս. Ամենափրկչեան վաճքում հիւրընկալւեցին Սպահան նահանգի եւ քաղաքի պետական բարձրաստիճան պատասխանատուները, ովքեր Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի հրաւերով ներկայացել էին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբքեն արք. Չարեանի մեկնման առթիւ կազմակերպած ճաշկերոյթին:

Հիւրերին դիմաւորեցին թեմակալ առաջնորդ Սրբազն Հայոց, Պատգամատրական Ծովովի Դիւանի, Թեմական եւ Կրօնական Խորհրդների ատենապետերն ու ներկայացուցիչները:



Հրաժեշտի ծրագրին ներկայացան Սպահանի նահանգապետ դկտր Ռասով Զառգառվուուր, Իրանի Խւլամական Մշակոյթի եւ Առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան տնօրէն հոչ. այաթ. Հարիբ-Ռեզա Առօղանին, նոյն հիմնարկութեան փոքրամասնութիւնների խնդրով կապ պրն. Մազահեղին, Սպահանի գաւառապետ Ֆավիլը, Սպահանի քաղաքապետ դկտր Զամալինեժադը, Սպահան քաղաքի 5-րդ

շրջանի նախկին եւ նորանշանակ քաղաքապետեր ճրտ. Ասաղաղադանը եւ ճրտ. Ֆարիանգը, Սպահանի Քաղխորհրդի տնօրէն ճրտ. Ամինին, Սպահանի 15-րդ շրջանի ոստիկանապետ գնդապետ Զարբար Զառեն, Սպահանի Ոստիկանութեան ուժերի հրամանատարի տեղակալ գնդապետ Ամինը, Սպահանի ուրբաթօրեայ աղօթապետ հոչ. այաթ. Թաքաթաբային, Սպահան նահանգի Ոստիկանութեան ուժերի եւ Տեղեկատութեան հինմարկի ներկայացուցիչները:



Այս առթիւ նախատեսել էր ճաշկերոյթ, որից յետոյ Ս.Ա. վաճքի Ծաղկեայ դահլիճում մտերիմ շրջանակում գրոյց ծաւալեց: Ապա հաւաքական լուսանկարելուց յետոյ պետական բարձրաստիճան այդերը հրաժեշտ տեցին գերշ. Տ. Բաբքեն արք. Չարեանին՝ յաջողութիւն մաղթելով նրան եւ յոյս յայտնելով, որ ապագայում առիթ եւ հնարաւորութիւն կը ստեղծի դարձեալ հանդիպելու:

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՅ ԱՅԳ. ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱԵԱԿԵՐՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԲԱՐԻ ԵՐԹ ՄԱՂԹԵՑԻՆ
ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԸ. Տ. ԲԱԲԻԴԵՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԻՆ**



Զորեքշաբթի՝ մայիսի 18-ի առաւտեան ժամը 11:30-ին, Նոր Զուղայի հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբիդեն արք. Չարեանն իր վերջին այցելութիւնը տևեց համայնքի հայոց ազգ. դպրոցների անձնակազմին, Ծնողական խորհուրդներին եւ աշակերտութեանը:

Սրբազն Հայրը կրթահամալիր ներկայացաւ թեմի Պատգ. Ժողովի դիւանի եւ Թեմական ու Կրօնական խորհուրդների ատենապետներ Վարուժ Մինասեանի, Վրէժ Տէր-Մարտիրոսեանի եւ Վարուժ Մովսիսեանի ընկերակցութեամբ, որտեղ անհամբերութեամբ իրենց թեմակալ առաջնորդին էին սպասում մանկապարտէակից մինչեւ միջնակարգ դպրոցների աշակերտ-ուինիները:

Երախտիքի խօսք ուղղելով Տ. Բաբիդեն արք. Չարեանին՝ նրան մաղթեց առողջութիւն եւ նոր յաջողութիւններ իր աստածահանոյ եւ ազգանւեր առաքելութեան մէջ:



Բարի երթի միջոցառումն սկիզբ առաւ «Արմէն» երկսեռ կրթահամալիրի տնօրէն Վրէժ Շիրանեանի խօսքով, որն արտայայտեց բոլոր դպրոցների պատասխանատուների եւ աշակերտութեան անունից: Նա կարեւորութեամբ նշելով, որ թեմի հայոց դպրոցները 12 տարիներ շարունակ վայելել են իրենց հոգեւոր առաջնորդի հայրական չերմ վերաբերմունքը, աւելացրեց. «Սրբազան Հայրը նաեւ որպէս ուսուցիչ յատուկ ուշադրութիւն, հետաքրքրութիւն եւ սէր է տաճել դպրոցների նկատմամբ ու դրա կենդանի վկան նրա ներկայութիւնն է դպրոցներում կազմակերպւած բոլոր ձեռնարկներին ու միջոցառումներին, նոյնիսկ իրականացւած ճամբարներին՝ ընդ որում իրախուսել եւ ոգեւորել է բոլորին: 12 տարի շարունակ Սրբազան Հօր ձեռամբ հնչել է դպրոցական առաջին զանգը, եւ աշխատանքի ենք անցել՝ նրա օրհնութեամբ ու աղօթքով»: Պին. Շիրանեանը վերջում

Այնուհետեւ թեմի Կրթական խորհրդի անունից ելոյթ ունեցաւ ատենապետուիի Սաթենիկ Աւետումեանը, ով խորը ափսոսանք յայտնելով Սրբազն Հօր թեմից հեռանալու կապակցութեամբ, նոյնպէս երախտիքի խօսք ասաց նրան՝ իր առաջնորդութեան ամբողջ ժամանակաշրջանում յանուն հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութեան, Կրթական խորհրդի եւ դպրոցների կողքին լինելու համար: Նա իր խօսքի աւարտին համոզում յայնեց, որ Սրբազն Հայրն իր արժանիքների ու հայոց եկեղեցու հոգեւոր առաջնորդին յարի իմաստութեամբ կը շարունա-

կի իր նվիրական աշխատանքը, ուր էլ որ լինի:

Ցաջորդիւ բեմ հրաւիրեց գերշ. S. Բաբդէն արք. Զարեանը, որտեղ Կրթական խորհրդի եւ բոլոր դպրոցների կողմից, տկն. Աւետումնանը յուշաներ ու շնորհակալագիր նիրեց Սրբազն Հօրը՝ թեմի հայկական կրթօջախների նկատմամբ ցուցաբերած հայրական հոգածութեան, անմիջական հովանաւորութեան եւ ուշադրութեան համար:

Իր հրամեցուի ելոյթում թեմակալ առաջնորդը նախ գնահատանքի խօսք ուղղեց Կրթական խորհրդին՝ սոյն այցելութիւնը կազմակերպելու եւ դպրոցների վերելքի ուղղութեամբ ջանք չխնայելու, դպրոցների անձնակազմին՝ աշակերտներին գիտելիքներով ու հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութեամբ կրթելու, իսկ Ծնողական խորհուրդներին՝ ամենօրեայ ներկայութեամբ աշխատանքների կազմակերպման գործում համագործակցելու կապակցութեամբ:

Սրբազն Հայրն իր խօսքի երկրորդ բաժնում աշակերտութեանն ասելով, թէ պէտք է հայարտ լինեն հայ դպրոց յաճախելու եւ նման հարազատ տան մէջ հասակ առնելու առթիւ, աւելացրեց՝ սիհիւրեան պայմաններում հայ դպրոցը փրկութեան փարոս է եւ աշակերտների մէջ օգորացնում ու ամրացնում է հաւատն ու հայրենասիրութեան ոգին: Գերշ. S. Բաբդէն արք. Զարեանը սաներին յորդորեց՝ իրենց շուրջերի վրայ անաղարտ պահել մայրենի լեզուն եւ լաւապէս նանաչել հայոց պատմութիւնը՝ հայ ժողովրդին ծառայելու ու նրա արդար իրաւունքների պաշտպանը լինելու համար:

Ծրագրի աւարտին աշակերտներն իրենց խմբական կատարմամբ «Գետաշէն» երգը նիրեցին հոգեւոր առաջնորդին:



Այնուհետեւ կրթահամալիրի բակում, Սրբազն Հայրը, նրան ընկերակցող պատվիրակութիւնն ու Կրթական խորհընդին ներկայացուցիչները, սկզբում բոլոր աշակերտութեան, ապա դպրոցների անձնակազմերի ու Ծնողական խորհուրդների հետ լուսանկարւեցին՝ յաւերժացնելով վերջին այցելութեան յուզիչ պահը:

ՆՈՐ-ԶՈՒՂԱՅԵՅԻՆԵՐԸ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՏՕՆԵՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 98-ԱՄԵԱԿԸ

Հինգշաբթի՝ մայիսի 26-ի երերկոյեան, նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում, ժողովրդական հանդիսաւոր տօնախմբութեամբ նշեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրման 98-ամեակը:



Սարդարապատի, Ղարաքիլիսայի ու Բաշ-Ապարանի ճակատամարտերի յաղթանակներով պասակած պանծալի տօնին նիրած երեկոն սկիզբ առաւ հանդիսավար Առդիմէ Ղեւանի բացման խօսքով, ով անդրադանալով Հայաստանի Հանրապետութեան հիմնադրմանը եւ ձեռքբերումներին, կարեւորութեամբ ասաց. «Առաջին Հանրապետութիւնը անգնահատեիք դեր ունեցաւ Հայ ժողովրդի յետագայ

պատմութեան համար. այն հայութեան մէջ արմատաւորեց ազգային միասնութեան ու պետականութեան վերականգնման համահայկական տեսլականը: Մայիս 28-ի խորհրդով, հայութիւնը 70 տարիներ շարունակ իր հոգու եւ մտքի խորհրդում անեղծ պահեց անկախ ապրելու ոգին, գուրգուրեց ազատ Հայաստանի երազանքը, պահպանեց եռագոյնը եւ նոյն ոգով՝ 1991-ի սեպտեմբերի 21-ին, ամրագրեց Հայաստանի Հանրապետութեան վերակերտումը»:

Այնուհետեւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամների միջոցով շրջափակ բերեց Հայաստանի եռագոյն դրօշը, որից յետոյ գերշ. S. Բաբդէն արք. Զարեանի նախագահութեամբ եւ թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցութեամբ կատարեց Հանրապետական մաղթանը: Մայթանքի ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վաճքի «Կոմիտաս» երգչախումբը՝

Արմեն Ամիրիսամեանի ղեկավարութեամբ: Ապա սկառատների ձեռքի եռագոյն դրօշներն օրինւեցին եւ ծածանւեցին, որից յետոյ հնչեց Իրանի Իսլ. եւ Հայաստանի Հանրապետութիւնների օրիներգերը:



Հոգեւարար արարողութիւնից յետոյ գերշ. Տ. Բաբեկն արք. Չառեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անահիա ծ. վրդ. Գումանեանը, թեմի Պատգ. Ժողովի դիւանի եւ Թեմական ու Կրօնական խորհուրդների աստենապետեր՝ Վարուժ Մինասեանը, Վրէժ Տէր-Մարտիրոսեանը եւ Վարուժ Մովսիսեանը, եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դալենանը պատանդանի վրայ կանգնելով, ընդունեցին աւանդոյթ դարձած հանդիսաւոր շքերթը՝ մասնակցութեամբ թեմի ազգային մարմինների ու ենթամարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի ու երիտ-պատանեկան միութիւնների անդամների, միութիւնների եւ երգչախմբերի վարչութիւնների, հայոց ազգային դպրոցների աշակերտութեան ու անձնակազմի, ՀՀ հիմնադրման 98-ամեակի տօնակատարութեան յանձնախմբի եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկառատական միաւորի անդամների:



Ընթացքում բանախօսական ելոյթով հանդէս եկաւ Իրանի Իսլ. Խորհրդարանի 10-րդ նատաշրջանի Սպահանի եւ հարաւային իրանահայութեան նորընտիր պատգամաւոր Ժորժիկ Արքահամեանը, որն ակնարկ ունենալով մայստեան գոյամարտին ու ՀՀ կերտման պատմութեանը, ասաց. «Եւ այդպէս խմի բերելով մեր վերջին ուժերը՝ մեր ժողովրդի քաջարի ղեկավարութեան՝ ի մասնաւորի Արամ Մանուկեանի օգնութեամբ, Սարդարապատի, Ղարաբիլիսայի ու Բաշ-Ապարանի ճակատամարտերում հայութիւնը յաղթանակ ունեցաւ: Դա ճակատամարտ էր, քանի որ մեծ պատերազմը շարունակւեց եւ դեռ շարունակում է: Մենք ճակատամարտում յաղթել ենք, սակայն պատերազմում դեռ չենք յաղթել: Այդ գեղեցիկ յաղթանակը կը գայ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդն ի վերջոյ վստահ լինի իր հարե-

ւանների կողմից, որոնք եկւոր են եւ հազարաւոր տարիների ընթացքում եկել ու տիրացել են տարածաշրջանի տարբեր հողամասերին ու հայրենիքներին՝ վերացնելով տեղական ժողովրդին»:

Պրն. Աբրահամեանն իր բանախօսութեան շարունակութեան մէջ անդրադառնալով Իրանում գլուխ բարձրացրած պանթուրքիստական շարժումներին՝ յատկապէս Աստրապատականի շրջաններում գոյութիւն ունեցող երեւոյթներին, որոնց միջոցով Ապրիլ 24-ին Թեհրանի հայութեան հասցեին սպանալիքներ են ուղղվել եւ մի շարք լոգունգների վահկարկումներով խաթարում է Իրանի հողային ամբողջականութիւնը, կարեւորութեամբ ընդգծեց, որ Իրանի հողային ամրողականութիւնը իրանական բոլոր ժողովրդների ամենակարեւոր խնդիրներից է, որի նկատմամբ ոչ մի զիջում չի կարող լինել:



Բանախօսն իր խօսքի մի այլ բաժնում անդրադառնալով 1991 թականին ՀՀ վերանկախացմանը եւ այն կարեւոր փաստին, որ անկախութեան ձեռքբերումից յետոյ պէտք է առաւելագոյնն աշխատել, ծրագրել եւ զոհաբերել՝ բնականն զարգացումն ապահովելու համար, շարունակեց. «Յաւօք սրտի մեր նոր անկախութիւնը չվայելեց իշխանաւորների հոգատարութիւնը: Յաւօք սրտի մենք ունեցանք շատ մեծ բարդութիւններ ու կորուստներ եւ թալանի ենթարկեցինք... Սակայն պիտի պատով խոստովանենք, որ մեր ժողովուրդը կրկին չկոտրեց եւ վերջերս, երբ Աղրբեջանական հրոսակախմբերը կրկին իրենց արդիական սպառագինութեամբ յարձակեցին Արցախի ողջ սահմանի ուղղութեամբ, ժողովրդի մէջ ի յայտ եկաւ նոյն սարդարապատեան ողին եւ անսպասելիորէն

այդ յարձակմանը դիմադրեցին մեր բանակի զինւորները»:



Այնուհետեւ օրոյ առթիւ իր հայրական պատգամը փոխանցեց գերշ. Տ. Բաբդէն արք. Զարեանը, ով սկզբում գնահատանքի խօսք ուղղեց տօնակատարութեան յանձնախմբին՝ երեկոյի կազմակերպման համար, ապա նոյնպէս գնահատելով օրոյ բանախոսին՝ ուժ ու կորով մարտեց նրան՝ խորհրդարանական աշխատանքներում։ Նա անդրադաւոնալով հայ ժողովրդի կատարած սիրագործութիւններին եւ ցուցաբերած կուռ ոգուն՝ ՀՀ կերտման ճանապարհին, աւելացրեց. «Փառք այսօրւայ հայոց բանակի զինւորներին, ովքեր նոյն վարդանանց ու սարդարապատեան ողով կարողանում են թշնամուն ասել՝ մենք տէրն ենք մեր իրաւունքների ու արժէքների. մենք տէրն ենք մեր հայրենիքի ու սուրբ Հոգի. Եւ այսպէս մենք պէտք է միակամ ու համախմբւած շարունակենք առաւել ամրապնդել մեր անկախութիւնը, հզօրացնել պետականութիւնը, պահպանել հայրենիքի սահմանները եւ բարեխաւել երկրի տնտեսական վիճակը»։ Սրբազն Հայրն իր խօսքում մատնանշելով, որ անկախութեան պահպանումն աւելի դժւար է քան ձեռքբերումը, կոչ արեց շենուանալ հայրենիքից եւ միասնաբար պահել ու պահպանել անկախութիւնն ու ազատութիւնը՝ հզօր հայրենիք կերտելու համար։



Գերշ. Տ. Բաբդէն արք. Զարեանն իր խօսքի աւարտին գնահատանքի խօսք ուղղելով իսլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան երեք անընդմէջ նատաշրջանների պատգամաւոր Ծորերու Բեգլարեանին՝ հայ ժողովրդին եւ իրանահայութեանը մատուցած ծառայութիւնների համար, տեղեկացրեց, որ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա Վեհափառ Հայրապետն ընդառաջելով Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդի եւ ազգային մարմինների խնդրանքին, Մեծի Տանն Կիլիկիյ «Ասպետ»-ի շքանշանին է արժանացրել արճ. Բեգլարեանին։ Այնուհետեւ Սրբազն Հայրը ներկաների յոտնկայս

ումկնդրութեամբ ընթերցեց սոյն շնորհաբաշխման կապակցութեամբ Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որից յետոյ իր ծեռամբ շքանշանն ամրացրեց Ռոբերտ Բեգլարեանի կոծքին։



Պրճ. Բեգլարեանը շնորհակալական խօսքով հանդէս եկաւ ուղևած Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա Վեհափառ Հայրապետին, գերշ. Տ. Բաբդէն արք. Զարեանին եւ թեմի ազգային մարմիններին՝ շքանշանի շնորհակալակալութիւնը յայտնելով նաեւ թեմի ժողովրդին՝ երեք նատաշրջան իր օգտին քւարկելու եւ իրեն վստահելու համար ներողամտութիւն հայցեց այն անհատներին, որոնց խնդրանքին իր գործունեութեան ժամանակաշրջանում չի կարողացել գրիացում տալ։ Նա յոյ յատնեց, որ նորընտիր պատգամաւորն աւելի կատարելագործած կաշխատի եւ խնդրեց առ Բարձրեալ Աստված՝ իրեն ասիթ ընձեռնի դարձեալ իրանահայութեան կողքին լինելու համար։



Ծրագրի գեղարւեստական բաժնում, ՀՀ վաստակաւոր երգչուիրի Նունէ Եսայանի կատարմամբ հնչեցին ազգային եւ յեղափոխական երգեր, որոնցով բազմապատկեց ներկաների տօնական տրամադրութիւնն ու խանդավառութիւնը։ Երեկոն եզրափակւեց աւանդական հրավառութեամբ։

ՌՈԲԵՐՏ ԲԵԳԼԱՐԵԱՆՆ ԻՐ ՊԱՏԳԱՄԱԻՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆԻ ԱՒԱՐՏԻՆ՝ ՀՐԱԺԵԾՏ ՏԻԵՅ ՀԱՅՈՅ ԱԶԳԻ ԱՉԳ. ԾԵՐԱՆՈՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ Հարաւային իրանահայութեան վերջին երեք նատաշշանների պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանն իր գործունելութեան ժամանակաշրջանի աւարտին, հինգշաբթի՝ մայիսի 26-ի առաօտեան ժամը 10:30-ին, որպէս պատգամաւոր իր վերջին այցը կատարեց Նոր Զուղայի հայոց ազգ. ծերանոց:

Պրն. Բեգլարեանն անցնող 12 տարիների ընթացքում յատուկ հոգածութիւն եւ ուշադրութիւն է ցուցաբերել Նոր Զուղայի հայոց ազգ. ծերանոցի նկատմամբ եւ որեւէ շանք չի խնայել այդ կառուցին նիւթա-բարոյական օժանդակութիւն ցուցաբերելու հարցում:



Ծերանոցի յարկի տակ պատգամաւորին չերմ դիմաւորեցին սոյն կենտրոնը հիմնադրող եւ ղեկավարող հաստատութեան՝ Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան միութեան նախկին եւ նորընտիր վարչութիւնների անդամները, ինչու չեն նաև ծերանոցի տարեց բնակիչներն ու աշխատակազմը:

Հանդիպման ընթացքում Կանանց Գթութեան միութեան վարչութեան նախագահութի Արմիճէ Սիմոնեանն իր խորին շնորհակալութիւնները յայսնեց արն. Բեգլարեանին, առ այն, որ այս տարիների ընթացքում միշտ լինելով ծերանոցի կողքին, ոչ միայն իր օժանդակութիւնն է ցուցաբերել կենտրոնի բարգաւաճման եւ տա-

րեցների բարօրութեան համար, այլեւ իր կառուցղական խորհուրդներով նեցուկ է հանդիսացել միութեանը՝ ծերանոցի ղեկավարման հարցում, ինչպէս նաև պետական մակարդակով առաջացած խնդիրներին առամել ոհիրին լուծում տալու կապակցութեամբ:



Ռոբերտ Բեգլարեանը ուրախութեամբ նշեց այն փաստը, որ մշտապէս վայելել է Կանանց Գթութեան միութեան անդամութիների, ծերանոցի բնակիչների եւ աշխատակազմի յարգանքը, ապա յոյս յայտնեց՝ ապագայում նոյնպէս լինելով միութեան եւ ծերանոցի կողքին՝ իր հնարաւորութիւնների սահմաններում դարձեալ օժանդակութիւն է ցուցաբերելու նրանց:

Հանդիպումը շարունակւեց համեստ հիւրասիրութեամբ, որի ընթացքում ի երախտագիտութիւն պեր. Բեգլարեանի կատարած ծառայութիւնների, միութեան անունից յուշանելք յանձնեց յիշեալին, ապա մտերմիկ գրուցի ներքոյ, նորընտիր վարչութեան անդամութիներն առիթ ունեցան ծերանոցին առնչուղ մի շարք հարցերի շուրջ խորհրդակցել պատգամաւորի հետ:

Ս.Ա. ՎԱՆՔԻ «Ս. ՆԵՐՍԵԽ ԵՆՈՐՀԱՎԻ» ԳՐԱԴԱՐԱՆԻ 110-ԱՄԵԱԿԻՆ ՆՏԻՐԻՎՃ «ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՆՈՒՆՔԸ» ԶԱՅՆԱՍԿԱՒԱՌԱԿԻ ԵՆՈՐՀԱՆԴԵՍ

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից նշանակած Ս. Ամենափրկչեան վաճքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հիմնադրման 110-ամեակի յոթեանական յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ, ուրբաթ՝ մայիսի 13-ի երեկոյեան ժամը 6-ին, վաճքի շրջափակում յոթեար գրադարանի մուտքի առջեւ, տեղի ունեցաւ մայնարդ-դաշնակահար Համիկ Ալեքսանդրեանի երկրորդ դաշնամուրային երաժշտութիւնների հաւաքածոյի՝ «Ծաղիկների շշունչը» ձայնասկաւառակի շնորհանդէսը:

Կազմակերպիչ յանձնախմբի ծրագրաւորման համաձայն՝ միջոցառումը պէտք է իրականացնէր հենց գրադարանի շենքում, սակայն ծրագրի մեկնարկից մի քանի ժամ առաջ տեղեկանալով, որ մեծ թուվ արևտասէր անհատներ ցանկութիւն են յայտնել ներկայ գտնելու շնորհանդէսին, որոշեց ծրագիրը կազմակերպել գրադարանի մուտքի առջեւ՝ բացօթեայ շրջափակում:

Երեկոյին ներկայ էին՝ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, ազգային մարմինների, հայոց

Դպրոցների եւ միութիւնների Ենրկայացուցիչներ, Համիկ Ալեքսանդրեանի հարազատներն ու աշակերտները եւ հայ ու պարսիկ արևստասէր հայրենակիցներ:



Միջոցառման բացումը կատարեց տաղանդաւոր դաշնակահարի միջոցով՝ ձայնասկաւառակին համանուն համարի՝ «Ծաղիկների շշունչը» Երաժշտութեան կատարմամբ, ապա 110-ամեակի յորելեանական յանձնախմբի անունից ելոյթ ունեցաւ Կարին Տէր-Մարտիրոսեանը, ով բարի գալուստ մաղթելով ներկաներին, անդրադարձաւ «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հիմնադրմանը՝ նշելով այն հանգամանքը, որ գրադարանի հիմնադրումը համընկնում է Իրանում սահմանադրութեան հաստատման իրադարձութեամբ:

Նա իր խօսքի շարունակութեան մէջ հանդիսատեսին ծանօթացնելով խմբավարի կենսագրական գծերին՝ բոլորին հրամիրեց ունկնդրելու ձայնասկաւառակից մի քանի համարներ՝ հեղինակի անզուգական կատարմամբ:

Համիկ Ալեքսանդրեանը շնորհանդէսի շարունակութեան մէջ իր հեղինակային երկրորդ ձայնասկաւառակում տեղ գտած 14 համարներից կատարեց «Գարնանային»-ը, «Վալս»-ը, «Զայանդեռուտ»-ը եւ «Մանկական եռանդ»-ը:

Միջոցառման ընթացքում արտայայտեց նաեւ հեղինակը: Պրճ. Ալեքսանդրեանն սկզբում իր ուրախութիւնը յայտնեց, առ այն, որ ձայնասկաւառակի շնորհանդէսը իրականացւեց «Ս. Ներսէս Շնորհալի» գրա-

դարամի հիմնադրման 110-ամեակի նիրած միջոցառումների շրջագծում, ապա ակնարկ ունենալով իր ստեղծագործական ներաշխարհին, որից բխել են իր հեղինակային Երաժշտութիւնները, բացատրութեամբ հանդէս եկաւ երկու սկալառակների մասին, նշելով, որ առաջին՝ «Թիթեռնիկների պարը» ձայնասկաւառակը նիրել է իր ծնողներին, իսկ երկրորդը «Ծաղիկների շշունչը»-ն՝ իր կնոշը: Նա վերջում շնորհակալական խօսք ուղղեց Թեմական խորհրդին եւ կազմակերպիչ յանձնախմբին՝ շնորհանդէսի իրականացման համար, ինչու չէ նաեւ մի շարք անհատներին, որոնց համագործակցութեամբ իրականացել էր ձայնասկաւառակի իրապարակումը:

Ծրագրի շարունակութեան մէջ Թեմական խորհրդի անունից արտայայտեց նոյն խորհրդի անդամութի Քառուլին Դիլանչեանը, ով նշելով հայութեան ճանաչման եւ հայ գրականութեան տարածման ուղղութեամբ «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի ունեցած հարուստ աւանդը, անդրադարձաւ ընթերցանութեան կարեւորութեանը եւ այրն. Համիկ Ալեքսանդրեանի համագործակցութիւններին, որն ունեցել է Թեմական խորհրդի հետ: Նա իր խօսքն աւարտեց՝ երկար տարիներ բեղուն գործունեութիւն մաղթելով յորելեար գրադարանին ու դաշնակահարին:



Ելոյթների շարանում եզրափակիչ խօսքն ասաց թեմակալ առաջնորդ Սրբազն Հայոք, որը միանալով երեկոյի ընթացքում հնչած շնորհաւորանքներին, ակնարկ ունեցաւ սկալառակի խորագրին եւ ընդգծելով, թէ բնութեան տարբեր մասնիկները եւ այդ շարանում ծաղիկները Աստծու հրաշալի ստեղծագործութեան արդիւնքն են, իր ուրախութիւնը յայտնեց, որ Համիկը բնութիւնը միջոց է դարձել իր Երաժշտութեան պատգամը բոլորին փոխանցելու համար: Գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը կրկնակի գնահատանքի խօսք ուղղելով հեղինակին՝ իր ստեղծագործութիւնները ծնողներին եւ կնոշը նիրելու կապակցութեամբ, ուրախութիւն յայտնեց, որ գրադարանի յորելեանական միջոցառումների մէջ ընդգրկել է նաև արևատի երեկոյ:

Վերջում մայեստրո Ալեքսանդրեանը ցանկացողների համար ստորագրեց իր ձայնասկաւառակը:

Երեկոն աւարտեց հիւրասիրութեամբ:

«Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱՎԻ» ԳՐԱԴԱՐԱՆԻ 110-ԱՄԵԱԿԻՆ ՆՏԻՐԻԱԾ՝ «ԴԻՏԱՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ - ՄԱՍ Բ» ԳՐՔԻ ԾՆՈՐՀԱՆԴԵՍ



Գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի հովանաւորութեամբ եւ Թեմական Խորհրդի կողմից նշանակած Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Ծնորհալի» գրադարանի հիմնադրման 110-ամեակի յորելեանական յանձնախմբի կազմակերպութեամբ, կիրակի՝ մայիսի 29-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ս.Ս. Վանքի շրջափակում՝ յորելեար գրադարանի մուտքի առջեւ տեղի ունեցաւ գերշ. Վարուժան արք. Հերկէլեանի աշխատասիրութեամբ հրատարակած «Դիւան Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի - մաս Բ» գրքի շնորհանդէսը: Գիրքը պարունակում է Ս. Ամենափրկչեան վանքի արխիւտան մէջ գոյութիւն ունեցող Ս. Էջմիածնի Մայր Աթոռից 1705-1800 ժամանակահատածի նշանագրութեամբ նոր Զուղա առաքած կոնդակներից թուվ 65-ի քննական վերծանումը եւ առնչակից ծանօթագրութիւններ:

Երեկոյին ներկայ էին՝ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, քահանայ հայրեր, ազգային մարմինների, հայոց դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչներ եւ գրասէր հայորդիններ:



Ծրագրի բացումը եւ օրուայ հաղորդավարութիւնը կատարեց Վերգինէ Միրզախաննեանը, ով համառօտ

կերպով ներկայացրեց գիրքը: Բացման խօսքին յաջորդեց Թովմա Գալստանեանի միջոցով գրքում տեղ գտած կոնդակներից մէկի ընթերցումը եւ համառօտ թարգմանութիւնը: Նա հակիրճ բացատրութիւն տվեց նաև անցեալում առաքած կոնդակների բովանդակութեան եւ ոճի վերաբերեալ:



Ապա համայնքի տաղանդաւոր երաժիշտներից Անուշ Ցովհաննիստեանը ուղի նւագակցութեամբ մենակատարեց երաժշտական մի համար:

Յաջորդիս ներկաներին իր հայրական խօսքը փոխանցեց գերշ. Սրբազն Հայրը, ով համապարփակ կերպով անդրադարձաւ գրքի պատրաստման աշխատանքներին եւ իր գնահատանքի խօսքն ուղղեց հեղինակին ու բոլոր այն անձանց, ովքեր իրենց մասնակցութիւնն են բերել գրքի պատրաստման աշխատանքներում:



Գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը շեշտեց առաջնորդարանի արխիւտան մէջ գոյութիւն ունեցող փաս-

տաթղթերի կարեւորութիւնը իբրեւ ազգային գամձեր՝ պատմական ճշմարտութիւններ երեւան բերելու հարցում եւ կարեւոր համարեց նրանց լոյս աշխարհ ընծայելն ու հանրութեանը հասանելի դարձելը, միաժամանակ դրաւուց ազգային մարմինների կողմից տարտղ աշխատանքները եւ ցուցաբերած ուշադրութիւնը՝ արխիատան մէջ գտնուող նիւթերի պահպանման վերաբերեալ: Նա շնորհակալութիւն յայտնեց գրի հրատարակման մեկնատութիւնը յանձն առած տէր եւ տկն. Վարդան եւ Անահիտ Վարդանեաններին, ովքեր Անահիտ եւ Վալերի Տէր-Մկրտչեանների յիշատակին նիրելով գիրքը՝ օժանդակեցին ի կատար ածել այս յոյժ կա-

րեւոր աշխատամքը:

Այնուհետեւ Սրբազան Հօր, Պատգամատրական ժողովի դիւանի եւ Թեմական խորհրդի ատենապետեր Վարուժ Մինասեանի ու Վրեժ Տէր-Մարտիրոսեանի միջոցով կատարւոց գրի գինեցնելու:

Ծրագրից յետոյ, ներկաներն այցելեցին «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանում կազմակերպած ցուցահանդէսը, որտեղ գրի մէջ հրատարակած 65 կոնդակներից ցուցադրութեան էր դրւել թուվ 9-ը: Այնուեղ նաև վաճառքի էին դրւել գրից օրինակներ, որոնք ցանկացողներին տրամադրուեցին Սրբազան Հօր մակագրութեամբ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ ԳԵՐՊ. Տ. ԱՆԱՌԻԱ Ծ. ՎՐԴ. ԳՈՒՃԱՆԵԱՆԻՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՂԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ ԸՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԹԻՒ



Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ յունիսի 8-ի երեկոյեան, Ս. Ամենափրկչեան վաճքի Ծաղկեայ դահլիճում, կազմակերպել էր ընդունելութիւն՝ Շահինաշհրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերապ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեաննին ծայրագոյն վարդապետութեան աստիճան շնորհելու առթիւ, որը տեղի է ունեցել մայիսի 22-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարում, ձեռամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Շահի եպս. Փանոսեանի:

Ընդունելութեանը հրահրւել եւ ներկայ էին քահանայ հայրերը եւ ազգային մարմինների ու ենթամարմինների, Հայ Դատի յանձնախմբի եւ եկեղեցիների երեցինութերի ու երգեցիկ խմբերի ներկայացուցիչները:

Ազգում Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանը, առիթի կապակցութեամբ շնորհաւորանքի խօսք ուղղելով Հայր Սուրբին եւ թեմի ժողովրդին, հակիրճ բացատրութիւն ներկայացրեց Հայաստանեաց Առաքելական եկեղեցու կուսակրօն հոգեւորականներին տրուղ գիտական աստիճանների մասին՝ կարեւորութեամբ ընդգծելով, որ ծայրագոյն վար-

դապետութեան աստիճանը համազօր է ատաճարանութեան ճիւղի գիտական բարձրագոյն աստիճանին՝ դոկտորային:



Այնուհետեւ առանձնաբար շնորհաւորանքի խօսքեր եւ բարեմարդանքներ հնչեցին Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի եւ Պատգամատրական ժողովի դիւանի, Շահինաշհրի հայ համայնքի վաշշութեան ու շրջանի Հայ Դատի յանձնախմբի անունից: Բոլոր ար-

տայալութեամերն էլ իրենց ուրախութիւնն ու բերկրանքը յայտնեցին Հայ Սուրբին՝ այս աստիճանին արժանանալու կապակցութեամբ եւ նորանոր յաջողութիւններ մաղթեցին նրան:



Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վահե Տէր-Մարտիրոսեանն իր խօսքում Անթիլիասի պէս հոգեւոր կենտրոն ունենալը հապատութեան առիթ համարեց, այն պատճառով որ այնտեղ աստιածաբանական ու հոգեւոր գիտելիքներից բացի, հոգեւորականներին տրուում է ազգային դաստիարակութիւն եւ որպէս իր խօսքի վառ ապացոյց՝ ընդգծեց Հայր Սուրբի եւ իր հոգեւոր եղբայրների ազգանպաստ աշխատանքները: Նա դրաւով գերապ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գումանեամի անմիջականութիւնը եւ վարչական ու կազմակերպական կարողութիւնները, վկայեց, որ Հայր Սուրբի շնորհի Շահինշահրի հոգեւոր ու ազգային կեանքն առաւել է աշխուժացել եւ սյուն համայնքում տիրում է համագործակցութեան ոգի ու համախորհութիւն:




Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետ պրն. Վարուժ Մինասեանը շնորհակալութիւն յայտնելով Հայր Սուրբին՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր եւ ազգային կեանքը զարգացնելու եւ աշխուժացնելու համար, գնահատեց նրա արգասաբեր համագործակցութիւնը թեմի Կրթական խորհրդի հետ եւ աւելացրեց, որ Հայր Սուրբը որպէս ուսուցիչ իր անժխտելի ներդրուումն է ունեցել թեմի հայոց դպրոցներում՝ մատաղ-

սերնդի առողջ եւ հայեցի դաստիարակութեան ուղղութեամբ:



Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ատենապետ պրն. Մելքոն Շիրանեանը յատուկ շնորհակալութիւն յայտնելով յատկապէս գերապ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գումանեամի ծնողներին՝ նման զաւակ դաստիարակելու համար, անդրադարձ ունեցաւ Հայր Սուրբի բնաւորութեանն ու խառնածքին՝ նշելով, որ նա մեծ ժողովրդականութիւն է վայելում թէ Սպահանի հայոց թեմում եւ թէ Անթիլիասում:



Շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ պրն. Աշոտ Դաւթեանն ասաց, որ սփյուռքեան պայման-ներում հայկական համայնքների գոյատեման երաշխիքն է Հայ եկեղեցու շուրջ համախմբած աշխատանքների իրականացումը, նաև աշխարհականների եւ հոգեւորական դասի համագործակցութիւնը: Նա իր խօսքի շարունակութեան մէջ կարեւորութեամբ անդրադարձաւ այն մեծ դերակատարութեանը, որ հոգեւորականներն ունեցել են Հայ Դատի քարոզչութեան գործում:

Ելոյթների աւարտին արտայալուց գերապ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գումանեամը, ով իր խօսքի սկզբնական բաժնում նշեց, թէ իր այս յաջողութեան համար պարտական է ոչ միայն Բարձրեալին, այլև թեմի անդամներին՝ իրենց օգնող ձեռքերի, աղօթող բերանների եւ ուժեղ թիկունքների համար: Այնուհետեւ Հայր Սուրբ այս



առիթով իր որդիսական երախտագիտութիւնը յայսնելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետին՝ շնորհակալական խօսք ուղղեց նաև Սպահանի հայոց թեմի նախկին առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանին եւ թեմի ազգային մարմիններին՝ ի մասնաւրի Շահինշահրի հայ համայնքի վարչութեանը: Հայր Սուրբն աւելացնելով, որ շարունակ վայելել է թեմի ժողովորդի եւ ազգային մարմինների յարգանքն ու համագործակցութիւնը, խոստացաւ իր բոլոր կարողութիւններն առաւել խոնարհութեամբ ու շերմնեաննութեամբ ներդնել՝ ի սպաս համայնքին ծառայելու եւ Հայ Դատին ու հայրենիքին զօ-

րակցելու գործին, համոզած լինելով, որ մեծ կոչումը ոչ թէ մեծութեան, պատի ու փառքի մէջ է, այլ՝ խկական ծառայութեան:



Վերջում թեմի Պատգամաւրական ժողովի եւ Թեմական ու Կրօնական խորհուրդների կողմից, սոյն մարմինների ատենապետների միջոցով յուշանւեր յանձնեց գերապ. Հայր Սուրբին, որից յետոյ ներկաները մօտենալով նրան՝ փոխանցեցին իրենց շերմագին շնորհաւրանքները:

Երեկոն աւարտւեց հիւրասիրութեամբ:

ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 101-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՈՎ ԽԱՉԵՐԻ ՕԾՈՒՄ

Հայոց Ցեղասպանութեան 101-ամեակի ոգեկոչման միջոցառումների ծիրում, մայիսի 4-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Նոր Զուղայի Ս. Սուեփանոս եկեղեցում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի նախագահութեամբ, թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցութեամբ եւ հոծ հաւատացեալների ներկայութեամբ կատարեց Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակների մասներով խաչերի օծման արարողութիւնը: Շարականի եւ այլ երգեցողութիւնները կատարեց Ս.Ս. Վանքի «Կոմիտաս» երգչախումբ՝ դեկալավութեամբ խմբավար Արմէն Ամիրիխանեանի:

Վորեան ներկայացրին նիւրատուները, ովքեր հոգացել էին դրանց պատրաստման ծախսը: Օծած խաչերը, որոնց կանորոնական բաժնում զետեղած են նահատակ սուրբերի մասունքները, տեղադրելու են Նոր Զուղայի եկեղեցիներում:



Օծումից յետոյ գերշ. Սրբազան Հայրն իր քարոզի ընթացքում անդրադառնալով Քրիստոսի բերած լոյսի ու բացած յաղթական ճանապարհի մասին, 1915 թականի Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ իր երկիրը, հողը, տունն ու կայքը



Սկզբում հնչեց «Կարգ Բարեխօսական Սրբոց Նահատակաց» աղօթքը, ապա Սրբազան Հօր ձեռամբ սրբալյս Միունով օծեցին եկեղեցու դասի կենտրոնում դրւած խաչերը: Սոյն խաչերը ի տես ժողո-

կորցրած հայ ժողովրդի գոյատեման երաշխիքը համարեց նոյն այդ Խաչի եւ Խաչեալի ճանապարհով քայլելը, որն առաջնորդում է ո՞չ թէ կործանումի, այլ՝ յաղթական յարութեան: Սրբազն Հայրը օծած խաչերը սուրբ նահատակների խորհրդանշական ներկայութիւնը համարեց, որոնք զարդարելու են մեր եկեղեցիների խորանները:

Թեմակալ առաջնորդն իր խօսքի աւարտին գնահատանքի խօսք

ասաց խաչերի պատրաստման համար նիփրատութիւն կատարած անհատներին, ապա միասնական «Տէրունական աղօթք»-ով աւարտուեց արարողութիւնը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ ՆԵՐԵՑ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ՄԻՆԱՍ ԵՒ ՂԱՐԴՈՒՆ ԳԻՒՂԻ Ս. ՆԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, Համբարձման տօնի առթիւ, հինգշաբթի՝ մայիսի 5-ի առաւատեան, Ս. Եւ անմար Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Մինաս եկեղեցում արժն. Տ. Վարդան քին. Աղաքաբայեանի ձեռամբ, իսկ Փերիոյ գաւառի Ղարդուն գիւղի Ս. Նշան եկեղեցում արժն. Տ. Սահակ քին. Մինասեանի միջոցով:



Ղարդուն գիւղի Ս. Նշան եկեղեցու Ս. Պատարագին նախագահեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերօ. Տ. Բարգէն արք. Զարեանը: Պատարագին մասնակցում էին նաև արժն. Տ. Խաչատուր քին. Զարգարեանը եւ դպրաց դասը: Ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» Երգչախումը:



Արարողութեանը ներկայ էին թեմի ազգային մարմինների անդամները, Փերիոյ գաւառի գիւղերի եկեղեցիների վարչութիւններն ու հայ բնակչութիւնը եւ Նոր Զուղայի ու Շահինշահրից ժամանած ժողովուրդ:

Ս. պատարագի ընթացքում թեմակալ առաջնորդ

Սրբազն Հայրն իր յատուր պատշաճի քարոզը տեսց ներկայ հաւատացեալ ներին: Գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի պատգամն սկիզբ առաւ՝ անդրադամալով Քրիստոսի երկինք համբարձելու իրադարձութեանը եւ յատկապէս Տիրոջ արտասանած վերջին խօսքերին՝ իր աշակերտներին ուղղած: Նա նշեց, որ Քրիստոսը յանձն առաւ զոհորդութեան, սիրոյ ու նիփրումի խորհրդանիշ խաչն իր ուսերին կրելու եւ ամենաթանկ գինը վճարեց՝ իր կեանքը տեսց, որպէսզի մարդը վերագտնի իր խական պատկերն ու այն ճանապարհը, որն իրեն մօտեցնելու է Աստծուն:

Սրբազն Հայրն իր խօսքի մի այլ բաժնում ներկաներին կոչ արեց իրենց կապն առաւել ամրացնել Աստծու հետ եւ հեռանալ մեղքից ու չարից՝ յափիտենական կեանքն ու ուրախութիւնը ժառանգելու համար, ապա աղօթեց Բարձրեալին, որ օրինի եւ պահպանի հայ ժողովրդին ու հայրենիքը պաշտպանող գինուրին:



Նա վերջում յատուկ գնահատանքի խօսք ուղղեց հոգեւորականաց ու դպրաց դասերին եւ երգչախմբին՝ պատարագն առաւել պայծառացնելու եւ գիւղերի եկեղեցիների վարչութիւններին եկեղեցիները բարեզարդ պահելու համար:

Հոգեպարար արարողութեան աւարտին ներկայ հաւատացեալ ները հաղորդութիւն ստացան պատարագիշ Քահանայ Հօր ձեռամբ, ապա աւանդոյթի համաձայն Համբարձման տօնը նշեցին բնութեան գրկում վայելով գարնանային պայծառ:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՂ ԱՆՁԱՆՁ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ

Երեքշաբթի՝ մայիսի 10-ի երեկոյնան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան նախաձեռնութեամբ եւ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի հովանաւորութեամբ գնահատանքի երեկոյ էր կազմակերպել, ուր մեծարւեցին Կրօնական խորհրդին ենթակայ բոլոր մարմինների անդամները եւ Եկեղեցիներում ծառայող անհատները:

Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ազգային մարմինների եւ Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչները, թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերը, երեցինները, Հոգեւոր ու Վճռաքեկ ատեանների, գիլերի Եկեղեցինների վարչութիւնների, «Շուշանիկ» երգչախմբի եւ Կանաց հոգեւոր լսարանի, Եկեղեցինների բարեգարդման կանաց յանձնախմբերի, Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ», Շահինշահրի «Նարեկ» եւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբերի, Ս. Սարգիս եւ Ս. Գէորգ օօրավարների տօների առթիւ հարիսայի պատրաստման յանձնախմբի անդամները եւ մի շարք այլ հրատիրեալներ հանդէս եկան գեղեցիկ երգերի եւ ասմունքի կատարմամբ՝ առաւել շերմացնելով մթնոլորտը:

Խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը, ով ընտանիքին, համայնքին, ազգին ու հայութեանի ծառայութեան պարտաւորութիւն համարելով, աւելացրեց, որ հայոց պատմութեան դժնդակ հանգրւաններում, հայ Եկեղեցին իր ժողովրդի կողքին է եղել եւ իր ծառայութիւնն է մատուցել նրան: Նա իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ որպէս հայ պարտաւորութիւն ունենք մեր ունեցած բարիքների մի մասը ազգի տրամադրութեան տակ դնել եւ մեր հիւթա-բարոյական օժանդակութիւնը ցուցաբերել ազգին ու հայութեանի կարեւորութեամբ շեշտեց, թէ ազգի, հայութեանի ու Եկեղեցու յաւերժութեան երաշխիքը մեր սրտաբուխ ծառայութիւնն է:

Ցաջորդի բոլոր երգչախմբերի ներկայացուցիչները եւ մի շարք այլ հրատիրեալներ հանդէս եկան գեղեցիկ երգերի եւ ասմունքի կատարմամբ՝ առաւել շերմացնելով մթնոլորտը:



Սկզբում ողջոյնի խօսքով հանդէս եկաւ երեկոյի հանդիսավար՝ Մանիա Ղուկասեանը, որից յետոյ արտայայտուեց Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան ատենապետ Ղուկաս Ծատուրեանը: Նա անդրադառնալով Ծառայութեան տարւան, ընդգծեց ծառայելու կարեւորագոյն դեր՝ Եկեղեցու պայծառացման, ազգի բարգաւաճման, հայութեանի յարատեման եւ իւրաքանչիւր հայ անհատի բարօրութեան գործում:

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Կրօնական

Ծրագրի աւարտին արտայայտուեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը: Սրբազն Հայը Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կողմից 2016 թականը Ծառայութեան տարի հոչակելը գեղեցիկ մտայդացում համարելով՝ աւելացրեց, որ եթէ չկարողանանք Աստծու կողմից մեզ տրած շնորհքը ծառայեցնել ուրիշներին, համայնքին, Եկեղեցուն եւ ազգին, այն ժամանակ մեզ տրածը իմաստ չի ունենայ: Նա նշելով նաև, որ ամենամեծ ծառան Քրիստոսն է եւ անդրադառնալով Վեհափառ Հայրապետի խօսքին ասաց, որ եթէ ամէն մարդու պարտաւորութիւնն է ծառայելը, ապա ամէն հայի պատիւը պէտք է լինի ծառայութիւնը:



Սրբազն հայութ վերջում գնահատելով թեմի Կրօնական խորհրդին ու Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեանը

Երեկոյի կազմակերպման համար, այսպիսի հոծ թուվ ծառայողներ ունենալը, պարզ ապացոյցը համարեց այն փաստի, որ համարն աշխայք եւ կենսունակ է, ու մեր ժողովրդի գալակերը պատրաստա-

կամ են ծառայելու իրենց ամբողջ Էութեամբ:

Յատկանշելի է, որ Երեկոյի ընթացքում տեղի ունեցած համեստ հիւրասիրութիւն, քանի որ ծրագրի համար նախատեսած հիմնական բիւշեն, յատկացելու է Արցախի օժանդակութեան հիմնադրամին:

**ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԳՆԱՀԱՏԵՅ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՑԱՂԹՈՂ
ԱՆԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻՆ**



2015 թւականի յուլիսին, Աղլերանում, ՀՀ Կրթութեան և գիտութեան նախարարութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցած Հայագիտական համահայկական 7-րդ օլիմպիադան ներկայացնեան 100-ամեակին, որին մասնակցել էին 10 երկրներից ժամանած աշակերտական պատվիրակութիւններ, ընդգրկած էին հայոց լեզից, գրականութիւննեցից, հայոց պատմութիւնից եւ հայ մշակոյթի պատմութիւնից հարցեր, իսկ դրան զուգահեռ անցկացւեց նաև Հայ Առաքելական Եկեղեցու պատմութեան մրցոյթը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի հովանաւորութեամբ եւ աջակցութեամբ: Արդիւնքում նոր Զուղայի աշակերտական խումբը, որին անդամակցում էին հայոց ազգային «Քանանեան» աղջ. միջնակարգ դպրոցից 10 աշակերտութիւններ, օլիմպիադայի յաղթողը ճանաչւեց՝ բացահիկ եւ աննախատէա մրցանակների թաքանակի շնորհի՝ իրեն վերապահելով օլիմպիադայի եւ հայ Եկեղեցու պատմութեան մրցոյթի ամբողջ հինգ առաջին կարգի, երեք 2-րդ կարգի եւ մեկ 3-րդ կարգի մրցանակները, ինչու չէ նաև երկուական շնորհակալագրեր հայ Եկեղեցու պատմութեան մրցոյթի եւ ասմունք անանակարգի շրջագծում:

Յաղթող պատվիրակութեանը մեծարելու նպատա-

կով, Կրթական խորհուրդը ձեռնամուխ եղաւ չորեքշաբթի՝ մայսի 11-ի Երեկոյեան, Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում կազմակերպել գնահատման Երեկոյ, որին մասնակցում էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ, օլիմպիադային մասնակից խմբի ղեկավար ուսուցիչները, աշակերտութիւններն ու նրանց ծնողները, խմբի նախապատրաստական դասընթացների կազմակերպման գործում դերակատար ուսուցիչներն ու անհատները եւ նոր Զուղայի հայոց դպրոցների ներկայացուցիչներ:



Սկզբում արտայայտեց Կրթական խորհրդի ասե-

Անպետուի Սաթենիկ Աւետումեանը, ով գնահատելով օլիմպիադայի կազմակերպիչների կատարած աշխատանքը եւ կարեւորելով աշակերտական խմբերի մասնակցութիւնը՝ նույն համահայկական միջոցառումներին, օլիմպիադայի կազմակերպումը կարեւոր համարեց Հայաստանի եւ Սփիտօքի աշակերտութեան հայագիտական մակարդակի բաժրացման, ինչու չէ նաեւ միմեանցից սովորելու եւ ներշնչելու առումով։ Նա գնահատանքի խօսք ուղելով աշակերտներին եւ պատասխանառուներին՝ արձանագրած յաջողութեան համար՝ աւելացրեց, որ անտարակյոս մեր աշակերտների այս յաջողութիւնների գործում նորանց աշխատասիրութիւնից եւ ծնողների բծախնդրութիւնից ու համագործակցութիւնից բացի՝ գլխաւոր դերակատարութիւնն ունեցել է հայ դպրոցը, որտեղ տարիներ շարունակ աշակերտները կրթւել են հայեցի դաստիարակութեամբ եւ մայրենի լեզվին, գրականութեանն ու հայ մշակոյթին առնչող գիտելիքներով, ինչի համար պարտական ենք ջանք ու եռանդ շխնայող մանկավարժներին ու ուսուցիչներին։



Ընթացքում ելոյթով հանդէս եկաւ Թեմական խորհրդի առենապատ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, ով սկզբում շնորհակալական խօսքով հանդէս եկաւ ուղած պատիրակութեան դեկավարներին եւ Կրթական խորհրդին։ Այնուհետեւ անդրադառնալով օլիմպիադային մասնակից աշակերտութիւններից Լուսին Մինասեանի այն խօսքին, որը Հայաստանեան հեռուստաընկերութիւններից մէկին տաճ հրացագործում ասել էր, թէ ցանկանում է իրաւաբան դառնալ՝ Հայ Դատին ու հայ ժողովրդին ծառայելու համար, կարեւորութեամբ ընդգծեց, որ հայկական վարժարաններում նման օրինակելի եւ տիպար աշակերտներ են դաստիարակուում, ովքեր Հայ Դատի արդարացի լուծման խնդիրը դարձնում են իրենց կեանքի նապատակներից։ Նա վերջում իր հապատութեան առիթը համարեց, որ փորդիկ Նոր Զուղայի աշակերտական խումբը, համահայկական այս մրցոյթի յաղթողն է ճանաչւել։

Ընթացքում առանձնաբար արտայայտւեցին նաեւ մասնակից աշակերտութիւնները՝ մրցոյթից ու նախապատրաստական շրջանից յուշերի եւ օլիմպիադայի շրջագծում իրենց ձեռքբերումների մասին։

Շարունակութեան մէջ ելոյթ ունեցաւ խմբի դեկա-

վար ուսուցչուի Ռիմա Միմոնեանը, ով շնորհակալական խօսք ասաց Կրթական խորհրդին եւ այն ուսուցիչներին ու անհատներին, ովքեր որեւէ շանք շխնայեցին աշակերտների մասնակցութիւնն ապահովելու եւ նորանց նախապատրաստելու ուղղութեամբ։ Նա Նոր Զուղայի աշակերտական խմբի այս փալլուն յաջողութիւնը մեծ թուվ անհատների հաւաքական աշխատանքի արդինք համարեց։



Յաջորդիւ աշակերտութիւններից Արփա Մարգարեանն իր նկարած Քրիստոսի սրբապատկերը նիկրեց գեր. Տ. Բագէն արք. Զարեանին, իսկ Կրթական խորհրդի կողմից եւ Սրբազն Հօր ձեռամբ աշակերտներին շնորհիւց գնահատագրեր ու նւէրներ։ Ներկայ ծնողներից Վեհանուշ Տէր-Մարտիրոսեանը, նոյնպէս շնորհակալութիւն յայտնելով Կրթական խորհրդին ու ուսուցիչներին, սոյն ձեռքբերման գործում դերակատար ուսուցիչներին ու անհատներին ծնողների կողմից նիկրեց յուշանւերներ։



Երեկոն աւարտւեց Սրբազն Հօր հայրական պատգամով, որը գնահատելով Կրթական խորհրդին ու բոլոր պատասխանատուներին՝ աշակերտութեան մասնակցութիւնն ապահովելու համար, դրաւանքի խօսք ուղեց նաեւ աշակերտներին եւ իրենց ծնողներին։ Այնուհետեւ նա նշելով, որ նման մրցոյթներին մասնակցութիւնը յատկապէս կարեւոր է տարբեր վայրերից ժամանած աշակերտների հետ շփւելու եւ միմեանց առաւել ճանաչելու առումով, Նոր Զուղայի այս փալլուն յաջողութիւնը հապատութեան մեծ առիթ համարեց՝ թեմի բոլոր ժողովրդի համար։

Ծրագրի աւարտին տեղի ունեցաւ ընդունելութիւն։

ԱՄՎՎԵՐՁԻ ՁԵՐՆԱՐԿ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՅ ԱՀԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ

Չորեքշաբթի՝ յունիսի 1-ին, կրկնակի տօն էր Նոր Զուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի սաների եւ աշխատակազմի համար, քանի որ նրանք ոչ միայն տօնեցին ու բոլորին յիշեցրին երեխաների հրաւունքների պաշտպանութեան միջազգային օրը, այլև դպրոցի ամավերջի հանդէսով գեղեցիկ ու իրօրինակ կերպով հաշվետութիւն ներկայացրին ամբողջ ուսումնական տարեշրջանից:

Միջոցառումն իրականացեց երեկոյեան ժամը 7-ին, Նոր Զուղայի Հայ Մ.Ա. «Արարատ» միութեան սրահում, որ որպէս հանդիսատես ներկայ էին՝ Շամինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերա. S. Անանիա Ծ. Վրդ. Գումանեանը, Կրթական խորհրդի ներկայացուցիչները եւ սաների ծնողներն ու հարազատները:



Սկզբում ողջոյնի եւ բացման խօսքով հանդէս եկաւ դպրոցի տնօրինուի Քառոյին Դիլանշեանը, որտեղ ասաւած էր. «Արդէն մեզ մօտ աւանդոյթ է դարձել մանկապարտէզ-նախակրթարանի աւարտական հանդէսը տօնել յունիսի 1-ին՝ մանուկների միջազգային օրը, այս գործը կարծես միտուած է՝ մեզ յիշելու եւ յիշեցնելու՝ ինչպէս մատղաշ ծիլերը, որոնք կարիք ունեն ամենօրեայգուրուրանքի ու խնամքի, նոյնպէս մեր երեխաները հասակ առնելու եւ առողջ սերունդ դառնալու համար կարիք ունեն մեր հետեւղական ու յարատեւ ուշադրութեանն ու գուրգուրուա վերաբերմունքին. յիշելու եւ յիշեցնելու, որ մեր մանուկներն ունեն այնպիսի անժամանցելի

իրաւունքներ, ինչպիսիք են կրթութիւն ստանալը, ապահով միջավայրում մեծանալը, առողջ մնելել եւ այն, որոնց յարգելն ու ապահովելը որպէս ծնողներ եւ դաստիարակներ մեր իւրաքանչիւրիս պարտքն է»։ Նա իր խօսքն աւարտեց շնորհակալութիւն յալտնելով՝ ազգային մարմիններին, դպրոցի աշխատակազմին, Ծնողական խորհրդին, ծնողներին եւ բոլոր այն անհատներին, ովքեր սատար են հանդիսացել դպրոցի ծրագրերի իրագործման ուղղութեամբ։



Բացման խօսքից յետոյ մեկնարկեց աշակերտական ելույթների շարանը՝ երեք առանձին վարագոյններում։ Նախ մանկապարտէզի ամենակրտսեր սաների խմբակը՝ Մանուշակագոյնը, հանդիսատեսի դատին յանձնեց իր գեղարւեստական ծրագիրը։ Նրանք ներկայացրին պարային մի կատարում, որը գեղեցիկ համադրութեամբ կազմել էր մարզական եւ պարային շարժումներից։ Կատարման աւարտին փորձիկների միջոցով հնչեց խմբական երգերից մի շարան։



Մանկապարտէզի աւագ խմբակի՝ Դեղինի ներկայացումը նվիրած էր հայ մանկագիրներին։ Նրանք սկզբում իրենց երախտագիտութիւնը յայտնեցին բոլոր մանկագիրներին, որոնց շնորհիւ ոչ միայն ծանօթացել են մանկական գրականութեան գոհարներին, այլև կարողանում են վայելել երշանիկ մանկութիւն։ Ապա աշակերտներն առանձնաբար ներկայացնելով անանի գորողներ՝ Հայրապետ Հայրապետեանի, Սիլա Կապուտիկեանի ու Ցովհաննես Թումաննեանի ամփոփ կենսագրութիւնները՝ իւրաքանչիւր գորողին յատկացած բաժնում, ասմունքնեցին եւ երգեցին պատկան հեղինակից մէկական ոտանաւոր ու երաժշտութեամբ մշակւած բանաստեղծութիւն։ Բոլոր խօսքերը, ասմունքները եւ երգերը հնչեցին սաների մենակատարումներով, իսկ երգերը համեմած էին պարային կատարմամբ եւ խմբի ձայնակցութեամբ։ Վերջում

մանուկները խոստացան միշտ հայերէն գրականութիւնը սիրել ու ընթերցել եւ լինել հայոց լեզվի փոքրիկ ու սրամիտ պաշտպանները։ Ծրագիրն աւարտւեց Երեւանին եւ մանկապարտէզին նվիրած երկու խմբական երգերով։



Գեղարևստական բաժնի եզրափակչին հանգրանցնելու համար առաջարկ է կատարել աշակերտութեան միջոցով։ Սկզբում բացման խօսքով հանդէս եկան երեք սաներ, ապա հրեշտակների կերպարներ ընդունած աղջկները, որոնց կրծքին ամրացւած էին մի շարք տառեր, պար բռնեցին բեմում։ Քիչ յետոյ նրանց միացաւ հայերէն տառերի գիտարար Մեսրոպ Մաշտոցի կերպարը ներկայացնող աշակերտը, ով ամենայն բժախընդութեամբ դասաւորութիւն տվեց տառերը կրող աղջկների շարքը եւ վերջում ստացւեց օրիայ ամենախորհրդանշական պատգամը՝ «Կարդաճը հայերէն»-ը, իսկ մինչեւ Մաշտոցի հանճարեղ պատգամի փոխանցումը, աղջկներն անհատական ելոյթների ներքոյ համահունց խօսքեր

արտասամեցին ալբուրենի հնչիւնների եւ մայրենին անաղարտ պահելու մասին։ Այնուհետեւ մուտք գործեցին հայ գինորի հանդերձանքով զգեստաւորած նախակրթարանի տղաները, ովքեր խոստացան որպես խիզախ հայորդիներ ու հայ ազգի ապագայ գինորներ ոչ միայն պահպաններ մայրենի լեզուն, այլեւ անխոնչ պաշտպանները հանդիսանալ սրբազն հայուններին։

Սոյն ներկայացման երկրորդ բաժնում նախակրթարանի բոլոր սաներն աւարտական գլխարկներ կրելով, համախմբւեցին բեմում եւ ծրագիրը ողողեցին մայրենին նիւրած խօսքերով ու երգերով։ Վերջում խմբական կատարմամբ հնչեց «Հրաժեշտ այբբենարանին» երգը եւ աւանդոյթի համաձայն գեղարևստական ելոյթը եզրափակւեց գլխարկների վերնետման արարողութեամբ։

Ամբողջովին աշխոյժ եւ խանդավառութիւն ներշնչող արարների աւարտին իր պատգամը փոխանցեց գերա. Տ. Անանիա Շ. վոր. Գունանեանը, ով դրաստանքով արտայատուելով երեկոյի ընթացքում հնչած պատգամների մասին, կարեւորութեամբ նշեց, որ մանուկների հետ լինելու, նրանց գեղեցկութեան եւ դաշլայի վայելումը ամենանեծ ներն է մարդ արարածի կեանքում։ Նա իր խօսքի շարունակութեան մէջ մատնանշելով, որ մեծահասակները շատ բաներ ունեն սովորելու մանուկներից՝ ինչպիսիք են անկեղծութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը եւ մաքրասրտութիւնը, աւելացրեց. «Այսօրւայ այս գեղեցիկ հանդէսը ինձ համար պատարագի համազօր էր։ Պատարագի ընթացքում մենք փառարանում ենք Աստծուն եւ աղօթքներ մատուցում նրան, իսկ այսօրւայ ծրագրի ընթացքում մենք փայելեցինք Աստծու ստեղծագործութեան ամենագեղեցիկ եւ էական արարծների պատարագը՝ իրենց քաղցր պատգամներով։» Հայր Սուրբն իր խօսքի աւարտին գնահատանքի խօսք ուղղեց մանկապարտէզ-նախակրթարանի անձնակազմին ու Ծնողական խորհրդին՝ իրենց կատարած շանադիր աշխատանքի, իսկ թեմի Կրթական խորհրդին՝ դպրոցների վերելքի ու աշակերտների դաստիարակութեան ուղղութեամբ գործունելութիւն ծառալելու համար։

Այնուհետեւ ձեռամբ գերա. Հայր Սուրբի, Կրթական խորհրդի ատենապետութի Սաթենիկ Աւետումնեանի, դպրոցի տնօրինուին եւ պատկան ուսուցչութիւնների, առանձնաբար տեղի ունեցաւ մանկապարտէզ-նախակրթարանի սաների վկայագրերի բաշխման արարութիւնը։

Վերջում ներկաներն այցելեցին կից սրարում մանկապարտէզ-նախակրթարանի սաների անհատական եւ խմբական անհատական ձեռքի աշխատանքներից կազմած ցուցահանդէս։



ՀԱՆԴԻՍԱԴՐՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՎ ՏԱՐՐԱՎԱՆ ԴՊՐՈՅՆ ԱՒԱՐՏԵՅԻՆ «ԱՐՄԷՆ» ԿՐԹԱԿԱՄԱԼԻՐԻ ՎԵՅԵՐՈՐԴԻ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՆՎԵՐՏԸ-ՌԵԴԻՆԵՐԸ

Նոր Զուղայի «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի վեցերորդ դասարանի աշակերտ-ումբիների աւարտական ճեղնարկը տեղի ունեցաւ ուրբաթ՝ յունիսի 17-ի երեկոյեան, հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում՝ ներկայութեամբ Շահինշահրի հայ համանքի հոգեւոր տեսուչ գերա. Տ. Անանիա ծ. Վլոյ. Գուճանեանի, ազգային մարմինների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչների, «Արմէն» դպրոցի տնօրինութեան, ուսուցչական կազմի ու Ծնողական խորհրդի եւ շրջանաւարտների հարազատների:



Ծրագիրն սկիզբ առաւ դպրոցի տնօրին Վլոյ Շիրանեանի ողջոյնի եւ բացման խօսքով: Նա իր արտայայտութիւնների սկզբնական բաժնում նշելով, որ այս տարի լրանում «Արմէն» տարրական կրթահամալիրի «Ոչ պետական դպրոց» հանգամանքով աշխատելու 10-ամեակը, անցնող տասը տարիների ընթացքում արձանագրած ձեռքբերումները ամփոփեց հետեւեալ կետերի ներքոյ.

Առաջին՝ դպրոցի աղջկանց եւ տղայոց բաժինների աշխատանքների համատեղումը, որը նախատել է մարդութիւն եւ նիւթական խնայողութիւնների իրականացման ու աշակերտ-ումբիների առաւել առողջ եւ հայեցի դաստիարակմանը. Երկրորդ՝ կանոնադր ծրագրով մշակութային եւ արտադասարանային բազմատեսակ աշխատանքների կազմակերպումը. Երրորդ՝ կարգապահութեան հաստատումը՝ աշակերտութեան, աշխատակազմի եւ ծնողների համար, ինչը բազմից գնահատել է Կրթադաստիարակչութեան հիմնարկի բննիւնների կողմից. Հորրորդ՝ Սպահան նահանգի առաջին կարգի դպրոցների ցուցակում ընդգրկելը, որը իրականցել է բազմադրու աշխատանքների կազմակերպման շնորհիւ եւ «Առողջութեան չատագով դպրոց» միջդպրոցական փառատօնի շրջագծում «Հինգ աստղանի դպրոց» անդամակարգի արժանանալը:

Միջոցառումը, յուգիչ եւ միեւնոյն ժամանակ խանդավառող ներկայացման վերածեց՝ սաների ողջոյնի խօսքով, ասմունքներով, երգերով ու յատկապէս աւանդոյթ դարձած երդման արարողութեամբ: Խմբական երգերի եւ ասմունքների շարանում կատարեցին «Աստղիկների երգը», «Հայոց լեզու», «Դու միշտ ուսուցիչ», «Զան հայրենիք» ու «Հայ ասպետներ» երգերը եւ «Դպրոցական յուշեր» ու «Հայոց այբուբեն» ասմունքները: Խև անհատական բաժնում կանա Ղազարեանն ու Վանա Յակոր Զաքերեանը զուգերգեցին «Հայոց լեզու», խև Դին Յովհաննիսեանը կատարեց «Հպարտ գնացէք» երգերը: «Հայոց այբուբեն» բանաստեղծութեան ասմունքի կատարմանը երգեհոնով նագակցեց Մեղրի Փանուանը:



Ընթացքում կատարումներն ընդմիջեցին Յամիկ Տէր-Մարտիրոսեանի եւ Արթուր Քամարզարեանի ելոյթներով, ուր երախտիքի խօսքեր ասեց ուսուցիչներին ու դպրոցի անձնակազմին, ապա հակիրճ բացատրութեամբ ներկայացւեց շրջանաւարտների անցած ուղին՝ սկսած ամենակրտսեր դասարանից մինչեւ այսօր, որոնցով հանդիսատեսի մօտ պատկերատրւեց սաների սերտած ուսումն, ստացած հայեցի դաստիարակութիւնը եւ յատկապէս ապրած դպրոցական յիշարժան պահերը: Ընթացքում ցուցադրեցին նաև շրջանաւարտների դպրոցական տարիներից լուսանկարներ: Յաջորդիւ աշակերտները բեմ ներկայացան՝ իրենց դպրոցական համազգեստները աւարտական գգեստներով փոխարինած, եւ Արփինէ Մովսիսեանի ու Աղրիան Մինաս-Խաչիկեանի միջոցով հնչեցին երդ-



Այնուհետեւ մեկնարկեց ծրագրի գեղարւեստական բաժինը՝ շրջանաւարտ աշակերտների կատարմամբ: Գեղարւեստական գոլտրիկ

ման կարգի յուղիչ տողերը: Գեղարևաստական բաժինը եզրափակվեց Փաթրիկ Ակոնի երգեհոնի նւագակցութեամբ «Վերջին զանգ» բանաստեղծութեան ասմունքով եւ «Հրաժեշտ «Արմէն» դպրոցին» երգի խմբական կատարմամբ:



Ծրագիրը շարունակեց վկայականների եւ գնահատագրերի բաշխման արարողութեամբ: Այս բաժնում ձեռամբ Հայր Սուրբի, Թեմական, Կրօնական եւ Կրթական խորհուրդների ատենապետք՝ Վրէժ Տէր Մարտիրոսեանի, Վարուժ Մովսիսեանի եւ Սաթենիկ Աւետումեանի, դպրոցի տնօրինութեան՝ Լիոնին Աբրահամեանի ու Վրէժ Շիրանեանի եւ հայերէն ու պարսկերէն առարկաներ դասաւանդող պատկան ուսուցիչների շրջանարարտներին յանձնեցին իրենց վկայականները, իսկ գերազանցիկներին՝ գնահատագրեր:

Ապա Կրթական խորհրդի կողմից պատրաստած գնահատագրերով ու պարգևներով գնահատեցին սոյն տարեշրջանի ընթացքում Սպահան քաղաքի Կրթադպուտիարակչութեան հիմնարկի կողմից կազմակերպած միջոցառումներում եւ այլ մրցոյթներում յաջողութիւն արձանագրած աշակերտներն ու պատկան ուսուցիչները: Գնահատագրերի բաշխմանը զուգընթաց հանդիսատեսին Եերկայացւեց աշակերտական յաջողութիւններից զեկոյց՝ ուսուցչուի Միջանուշ Տէր-Մարտիրոսեանի եւ Ժանետ Բաղումեանի միջոցով:



Կրթական խորհրդի ատենապետուի Սաթենիկ Աւետումեանը առողջ եւ գիտակից սերունդ դաստիարակելը հիւաքանչիր հասարակութեան պարտքը համարելով, անդրադառ կրթութեան նկատմամբ հայ ժողովութիւնի նիդրումին ու մեծ սիրուն եւ աւելացրեց, որ թեմի ազգային ամբողջ համակարգը շարունակ իր աշխատանքի կիզակետում է պահում հայկական դպրոցների խնդիրները եւ հետամուտ է համայնքի գարունակը հանդիսացող այս հաստատութիւնների գործունեութեանը: Տէ՛կ. Աւետումեանը դիմելով շրջանարարտներին ընդգծեց, որ հայ դպրոցը ոչ միայն կրթում է, այլև մի սրբավայր է, ուր հայեցի մթնոլորտի Եերբք մատաղ սերնդին օժտում է ազգային վեհարձներով ու հայեցի դաստիարակութեամբ: Նա աշակերտներին

յորդորեց աշխատել ջանամիրաբար եւ ուսման ասպարեզում լինել յաջողակ ու առաջնակարգ, իսկ Կրթական խորհրդի անունից շնորհակալութիւն յայտնեց դպրոցի տնօրինութեանը, ուսուցչական կազմին ու Ծնողական խորհրդին:



Այնուհետեւ Եերկաներին իր պատգամը փոխանցեց գերապ. Տ. Անանիա ծ. Վլոդ. Գուճանեանը, ով սկզբում դրատանքի խօսք ուղղելով շրջանաւարտներին ասաց, որ նման գիտակից, արթուն եւ աշխատասէր սերնդի շնորհիւ երաշխաւորած է մեր ազգի ապագան: Նա իր խօսքի մի այլ բաժնում գնահատանքի խօսք ուղղեց նաև «Արմէն» կրթահամալիրի տնօրինութեանն ու ուսուցչական կազմին, ովքեր ծնողի նման սրտցաւորէն աշխատում են աշակերտութեան վերելքի ու զարգացման համար, իսկ Կրթական խորհրդին եւ դպրոցի Ծնողական խորհրդին ու ծնողներին՝ աշակերտների կրթելու եւ դաստիարակելու ուղղութեամբ նիւթա-բարյական օժանդակութիւն ցուցաբերելու առթիւ: Հայր Սուրբն իր պատգամն աւարտեց շրջանաւարտներին կոչ անելով՝ յարդանքով վերաբերել ուսուցիչների եւ ծնողների նկատմամբ, հետեւ մեծերի խորհուրդներին եւ որպէս հայ դպրոցի սաներ՝ բայել հայ աշակերտին յարիր նկարագրով:

Վերջում ոգեշնչած ու խանդավառած աշակերտ-ուիթներն աւարտական գիտարկների վեր նետմամբ, հրաժեշտ տևեցին իրենց կեանքի այս հանգրւանին:

Հարկ է նշել, որ աւարտական ձեռնարկը կազմակերպել էր հայերէն առարկաների ուսուցչուիթներ՝ Ժանետ Բաղումեանի եւ Միջանուշ Տէր-Մարտիրոսեանի ու երգ-երաժշտութեան դասաւոր Արսինէ Մարգարեանի միջոցով:

**ՆՈՐ ԶՈՒԴԱՅԻ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ
2015-16 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐՁԱՆԻ ԱՐԱՐՏ**



Զորեցաբթի՝ մայիսի 11-ի յետմիջօրէի ժամը 6:00-ին, տեղի ունեցաւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նոր Զուդայի Կիրակնօրեայ դպրոցի 2015-16 ուսումնական տարեշրջանի փակման պահը: Կիրակնօրեայ դպրոց այցելեց Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, ում ընկերակցում էր Կրօնական Խորհրդի ատենապետ արք. Վարուժ Մովսիսեանը:

Թեմակալ առաջնորդի ձեռամբ վկայագրեր ստացան Կիրակնօրեայ դպրոցի սաները, ապա հաւաքական լուսանկարեցին:

ԿՐՈՆԱԿԱՆ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԴՐՔԻ ԵՒ ԻՐԵՐԻ ՑՈՒՅԱՀԱՆԴԻՍ

Հինգշաբթի եւ ուրբաթ՝ 12 եւ 13 մայիսին, Սպահանի հայոց թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան խորհրդի կազմակերպութեամբ, Ն.Զ. Կիրակնօրեայ դպրոցում տեղի ունեցաւ կրօնական-եկեղեցական գրքերի եւ իրերի երկօրեայ ցուցահանդէս-վաճառք:



Ցուցահանդէսի բացումը կատարւեց հինգշաբթի առաւատեան ժամը 10:00-ին, գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի ձեռամբ: Ներկայ էին Կրօնական եւ Թեմական խորհրդների ատենապետեր Վարուժ Մովսիսեանը եւ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, քահանայ հայութեր, ազգային մարմինների եւ հայոց դպրոցների ներկայացուցիչներ ու համայնքի անդամներ:

Բացումից յետոյ, ներկաները դիտեցին սրահում դասաւորած գրքերն ու իրերը, նաև սրահին կից դասարանում Կիրակնօրեայ դպրոցի սաների միջոցով անցնող տարիաց ընթացքում պատրաստած ձեռքի աշխատանքները, որոնք ներկայացնում էին աշակերտութերի սովորած կրօնական նիւթերն ու նրանց փոխանցուած գիտելիքները:



Ցուցահանդէսը տեսելով երկու օր եւ ունենալով նկատառելի թուվ այցելուներ, աւարտւեց ուրբաթ երեկոյան ժամը 8-ին:

ԱՐՅԱԽԱՅԱՅՈՒԹԵԱՆԸ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՈՒՂԴԱՁ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Նոր Զուղայի «Ասուա» ոոք երաժշտական խումբը, երեքշաբթի՝ մայիսի 11-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան հանդիսութիւնների դահլիճում, հանդէս եկալ բարեգործական համերգով։ Համերգի կազմակերպող նոյն միութեան Ուսանողական միաւորով վարչութիւնն էր, որի անունից ներկաներին ողջունեց Վանայ Շիրանեանը, ապա անդրադառնալով համերգի նպատակին, Արցախի սահմանապահ մարտիկներին մաղթեց առողջութիւն եւ անվտանգ ծառայութիւն, նաև երախտագիտութեան խօսք ուղղեց միութեան կենտրոնական վարչութեանը եւ Ուսանողական միաւորով համերգը իրականացնելու առումով խմբին հովանաւորելու եւ աջակցութիւն ցուցաբերելու համար։



Ողջունի խօսքից յետոյ «Ասուա» խումբը դահլիճը խանդավառութեամբ ողողեց ոոք երաժտութեամբ երգի կատարումներով։ Հանդիսատեսի մօտ մեծ տպաւորութիւն թողեց խմբի հեղինակային կատարումը, ինչն արժանացաւ հանդիսատեսի բուռն խրախուսական ծափողյներին։

Համերգի աւարտին խմբի անունից, Դրո Տէր-Մարտիրոսեանը շնորհակալութիւն յայտնեց հանդիսատեսին՝ իրենց ներկայութեամբ համերգի նպատակին սատարելու համար։

Վերջում միութեան կենտրոնական վարչութեան անդամներ Մասիս Մինասեանի ու Ժորժ Ղազարեանի եւ Ուսանողական միաւորի վարչութեան նախագահ

Ռուբէն Մինասեանի միջոցով խմբի անձնակազմին յանձնեցին շնորհակալագրեր՝ համերգի մտայդացման եւ իրականացման համար։



«Ասուա» խումբը ներկայացնում են նոր Զուղայի երիտասարդներ՝ երգի մենակատար եւ դաշնակահար՝ Դրո Տէր-Մարտիրոսեանը, հարմոնիկա նագոյ եւ երգի կատարող՝ Վահան Վարդեանեանը, Լիդ կիթառահար՝ Վահէ Կարապետեանը, ոհտմ կիթառահար՝ Կարբէ Դիլանչեանը, բաս կիթառահար՝ Սերո Տէր-Մարտիրոսեանը եւ հարածային գործիքների կատարող՝ Ադրիան Դալթեանը։



«Ասուա» ոոք երաժշտութեան համերգային ծրագրից գոյացած ողջ հասյութը ուղղվելու է արցախահայութեանը օժանդակող հիմնադրամին։

Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԷՑՆԵՐԻ ՄԻԱԽՈՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 25-ԱՄԵԱԿԸ ՆԾԻԵՅ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Հինգշաբթի՝ մայիսի 13-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան դահլիճում, հանդիսութեամբ նշեց միութեան Երեցների միաւորի հիմնադրման եւ գործունէութեան 25-ամեակը։ Երեկոյի սկզբում ներկաներն էկրանի վրայ ցուցադրուղ պատկերների եւ կազմակերպած ցուցահանդէսի միջոցով հաղորդեցին 25-ամեայ միաւորի անցեալի ու ներկայի հետ։


Երեկոյի պաշտօնական բաժնում բացման խօրով հանդէս եկալ օրուա հանդիսավարուիի՝ Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, ապա Երեցների միաւորի վարչութեան խօսքն ընթերցեց Հիլդա Շառուկեանը։

Օրայ առթիւ հրաւիրած էր բանախօսնելու ազգային-հասարակական վաստակաւոր գործիչ եւ միութեան արտօնատէր Թաթուլ Օհանեանը, ով լաւատեղեակ լի-

Աելով Երեցների միաւորի կազմաւորման գործընթացին, ինչպէս նաև ծառալած բեղուն գործունեութեանը, իր բանախօսութեան առանցքը դարձեց նոյն թեման:



Միութեան արտօնատէրը, մինչ բուն թեմային անցելը ողջունելով միաւորի 25-ամեակի առթիւ կազմակերպած յորելենական ձեռնարկը՝ տարայ ընթացքում կազմակերպած բոլոր յորելենական ձեռնարկները համարեց երախտագիտութեան ամենագեղեցիկ արտայալսութիւններից մէկը: Ասա պատմական ակնարկով բնութագրեց միաւորի կազմաւորման ընթացքը եւ անցած ուղին, նշելով, որ «Գարնանային խաղերի սկզբնական շրջանում վաստակ ունեցող միութենականներից կազմւեց մի խումբ, որը ժամանակի դժւարին ու անպատ պայմաններում ստանձնեց Գարնանային խաղերի հիւրընկալման պատասխանատութիւնը: Հետագային այդ խումբը դարձաւ մի հրաշալի կորիգ, որի շուրջ ձեւաւորւեց Երէցների միաւորը. միաւոր, որի անդամ-ուհիների ամենօրեայ ներկայութեամբ ու ծառալած գործունէութեամբ, ինչպէս նաեւ միւս միաւորների հետ համբնթաց քայլելով՝ մեծ նշանակութիւն ունեցաւ միութեան համար»:



Բանախօսը կարեւորութեամբ ընդգծեց այն հանգամանքը, որ Երէցների միաւորն առաջնորդւելով ներքին կանոնագրով եւ ունենալով բաժանմունքներ ու խմբակ-

ներ, աշխատել է 25 տարի եւ Ծիլթա-քարոյական մեծ աշակցութիւն է ցուցաբերել «Արարատ» միութեանը: Նա կարեւորութեամբ ընդգծեց Հայ Դատի պահանջատիրական ասպարէզում տարտո աշխատանքներին միաւորի մասնակցութիւնը, անդրադարձաւ նաև համապատասխան միջոցառումներ կազմակերպելով՝ ազգային-կրօնական աւանդոյթների ու ծէսերի պահպանման եւ տարածման ուղղութեամբ միաւորի ունեցած մեծ ներդրմանը:



Պրճ. Օհանեանը վերյիշելով հիմնադիր անդամների անունները, որոնցից ներկայ էին նաև հանդիսութեանը, նշեց ժամանակի դժւարին եւ համեստ պայմաններով ու հնարաւորութիւններով կատարած աշխատանքներն ու ակնարկեց միաւորի վերելքին նպաստող մեծ ներդրումին, ինչի արդիւնքում միաւորն այսօր շարունակում է աշխատել բարենպատ պայմաններում: Բանախօսն իր ելոյթը եզրափակեց շնորհաւորանքներով ու բարեմարթանքներով:



Գեղարվեստական բաժնում խմբական երգերով ելոյթ ունեցան Ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթեւ» երգչախմբի անդամութիներ՝ Արեգա Յարութիւնեանը, Փարելի Թահմագեանը, Արփի Դիլանչեանը, ԱԾի Նովշադեանը եւ մենակատար՝ Անասիկ Ցոլվէփեանը. Դաշնամուրի կատարմամբ նրանց ընկերակցում էր դաշնակահար-երաժիշտ եւ «Տաթեւ» երգչախմբի ղեկավար Համիկ Ալեքսանդրեանը:

Միութեան Մշակութային միաւորի «Կոունկ» աս-

մունքի խմբից Ալինա Տէր-Սուքիասեանը եւ Ալինա Ալեքսանդրեանը ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեանի ելոյթ ունեցան բանաստեղծական կտորների կատարումներով:



Ցաջորդ բաժնում խանդավառ երաժշտութեան ներքոյ դահլիճ բերեց յոթելեար միաւորի տորթը, որի հայտելու պատիւր տրեց միութեան արտօնատէրե՝ Թայուլ Օհանեանին եւ Ալին Մելիքեանին, միութեան Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մի-

նասեամին, միաւորի վարչութեան նախագահ՝ Վարդուշ Զարգարեանին, հիմնադիր ու վաստակաշատ անդամ-ութիներին՝ դկտ. Ռուդոլֆ Տէր-Գալուստին, Մագի Մելիքեանին, Զեփինը Մարտիրոսեանին, Աննիկ Սիմոնեանին եւ Այիդա Ղարիբեանին:

Ցաջորդի միութեան Կենտրոնական վարչութեան ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նախագահ՝ Մասիս Մի-նասեանը, որին յաջորդեց միաւորին ուղյած շնորհաւորական ուղերձներից հատւածների ընթերցումը:



Երեկոն շարունակեց հիմասիրութեամբ եւ խրախնացով:

Հնադիսութեանը ներկայ էին Թեմական խորհրդի ներկայացուցիչները, միութեան Կենտրոնական վարչութեան անդամները, միաւորների վարչութիւնները, Երեցների միաւորի անցեալի ու ներկայի անդամ-ութիները եւ միջոցառման իրականացման գործին աշակեցութիւն ցուցաբերած անհատ միութեանները:

Երեկոյի խրախնացքի երգ եւ երաժշտութիւնը ապահովեց «Անի» նւագախումբը:

«ԱՏԱՄՆԵՐԻ ԵՒ ԲԵՐԱՆԻ ԽՈՌՈՉԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՅՈՎ՝ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Կազմակերպութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ուսանողական միաւորի վարչութեան, ուրբաթ՝ մայիսի 20-ի առաօտեան ժամը 11:00-ին, միութեան յարկի ներքոյ, երիտասարդ ատամնաբոյժ՝ Արմեն Ալեքսանդրեանը հանդէս եկաւ «Ատամների եւ բերանի խոռոշի առողջապահութիւն» թեմայով դասախոսութեամբ: Բժիշկ Ալեքսանդրեանը պատրաստած պատկերների ու իրական եւ ուսուցողական տեսանիւթների միջոցով ներկայացրեց բերանի խոռոշի հիւանդութիւններին ու բուժման եղանակները, ինչպէս նաև ատամների առողջութիւնը պահպանելու առումով կիրառող ճիշտ միջոցները: Նա անդրադարձաւ նաև երեխաների ատամները պահպանելու ծեւերին եւ պատասխանեց ներկաների յուղոյ հարցերին:


Դասախոսական ձեռնարկին ներկայ էին Միութեան Կենտրոնական վարչութեան անդամ Ժորժ Ղազարեանը, միաւորի վարչութեան կազմը, ուսանողներ, երիտասարդներ եւ մեծահասակներ:



ԾՐՁԱԳԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԱՐԱՔ՝ ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՈՒԹԵԱՄԲ

Փերիոյ կրթ. միութեան կենտ. վարչութեան (Նոր Զուղա) նախաձեռնութեամբ մայիսի 11-ից 13-ը, երկօրեայ շրջագայութիւն էր կազմակերպւել դեպի Արաք, որին իրենց մասնակցութիւնն էին բերել տեղի հայ համայնքի անդամներից:

Շրջագայութեան առաջին օրը՝ երեկոյեան ժամը 8-ին, խումբը հասաւ Արաք քաղաք, ուր հանգրւանեց համայնքի նախկին հայոց դպրոցում, որը այժմ ծառապում է որպէս ճամբարների կեցութեան վայր՝ ունենալով սպասարկման բաւարար հնարաւորութիւններ:



Նոյն օրը շրջագայողներն այցելեցին Ս. Մեսրոպ եկեղեցի, որտեղ աղօթեցին առ Աստված, մոմ վառեցին եւ կատարեցին իրենց սրտաբուխ նիդրատութիւնները:



Ցաջորդ օրը՝ առաւտեան, խումբն այցելեց Արաքի Եկեղեցա-դպրոցական հոգաբարձութեանը պատկանող մի գեղեցիկ այգի, որտեղ բնութեան գրկում առաջացած մտերմիկ ու ջերմ մթնոլորտի ներքոյ առաւել բարձրացաւ բոլորի խանդավառութիւնն ու տրամադրութիւնը:



Այնուհետեւ ճաշակելով համեղ ճաշը՝ նրանք կէսօրից յետոյ թողեցին այգին եւ այցելեցին «Շահզամի» պուրակ, որը նոյնպէս հիասքանչ վայր էր՝ իր գեղեցիկ բնութեամբ ու կարկաչուն աղբիւներով:



Օրիայ մնացած բաժնում այցելութիւն տրւեց նաև մօսակայ գիտի Ս. Յակոբ եկեղեցի. այստեղ բոլորին հիացրեց Արաքի հայ համայնքի կատարած լայն աշխատանքը՝ նախնիներից փոխանցւած սովորութիւնների եւ աւանդոյթների պահպանման ուղղութեամբ:

Մայիսի 13-ի առաւտեան շրջագայողները նախ եղան քաղաքի մեծ առեւտրի կենտրոններից մէկում, ապա ճաշեցին եւ ուղեւորութիւն դեպի Սպահան իրենց յուշերում յաւերժացնելով սոյն շրջագայութեան անմուռանալի պահերը՝ Արաքի հայ համայնքի հետ ծանօթանալն ու շփումները, բնութեան գեղեցիկ ու հիասքանչ տեսարանները եւ ի հարկէ լաւ ուղեկիցների հետ ճամբորդելու հաճոքը:

**Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԾԱՀԻՆԾԱՀՐԻ ՄԱՍՆԱՑԻՒՂՈՒՄ
ՏՕՆԻԵՅ ԱՇԽԱՏԱՊՈՒԹԵԱՆ ՄԻՋԱՀԳԱՅԻՆ ՕՐԸ**



2016 թւականի մայիսի 1-ի ժամը 19:30-ին, Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «Արարատ» միութեան Ծահինշահրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Երէցական միաւորի նախաձեռնութեամբ, «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում կազմակերպել էր դաշտահանդէս՝ Աշխատաւորութեան տօնի առիթով:



Երեկոյին ներկայ էին Ծահինշահրի հոգեւոր տեսուչ հոգջ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը եւ Համայնքի վարչութեան ներկայացուցիչները: Սրահը զարդարած էր օրիան համապատասխան շնորհաւորական պատառով, տարբեր մասնագիտութեան աշխատանքային համագեստներով զգեստաւորած արձաններով: Սրահում հնչում էր հաճելի հայկական երաժշտութիւն:

Ծրագրի ընթացքում ցուցադրւեց տեսամիւթ՝ Արցախում տիրող իրավիճակի մասին՝ Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ շրջաններում քառօրեայ պատրազմում իրենց մասնակցութիւնը բերած

հայ ժողովրդի այն զաւակների պատին, ովքեր ապրում էին խաղաղ, ստեղծագործ կեանքով, սակայն Հայունների համար օրիասական պահին իրենց ծեռքից ցած դրեցին աշխատանքային գործիքները եւ զինուրագուեցին Արցախի պաշտպանութեան սուրբ գործին:

Մասնաճիւղի վարչութեան անունից ներկաներին բարի գալուստ մաղթեց միութեան քարտուղար տկն. Այդու Մուլրադեանը, ով ներկաներին ամփոփ կերպով ծանօթացրեց Աշխատաւորութեան միջազգային օրւայ ծագման մասին եւ նշեց. «Բանուոր դասակարգը գիտակցելով, որ եթէ աշխատանքում ունի պարտականութիւններ, ապա դրանց համարժէք պէտք է ունենայ նաև իրաւունքներ, յստակ պահանջեց իր իրաւունքները աշխատանքի պաշտպանութիւն, աշխատանքային պայմանների բարելաւում, 8-ժամեայ աշխատանքային օրւայ հաստատում»: Ապա նշեց, որ հայ ազգը աշխատասէր է. որտեղ էլ, որ ապրելիս լինի, նա իր ընտանիքի համար ստեղծում է բարեկեցիկ եւ ապահով կեանք, տուն է կառուցում ու շնորհնում իր շրջապատը: Վերջում տկն. Մուլրադեանը շնորհաւորեց բոլոր նրանց, ովքեր ապրում են, ստեղծում, սովորեցնում եւ օգտակար լինում մարդկանց իրենց աշխատանքով:



Մաղթանքի խօսքով հանդէս եկաւ հոգջ. Հայր Սուլբը, ով գնահատելով «Արարատ» միութեան վարչութեան եւ Երէցական միաւորի անդամներին՝ աշխատաւորներին նւիրած այդ գեղեցիկ երեկոն կազ-

մակերպակալու համար, նշեց, որ այսօր միասին լինելու պահ է, ուրախութեան օր է. աշխատանքը սուրբ է, իսկ կատարողը՝ ճամփորդ: Ցանկացած աշխատանք լինի դա ազգային, եկեղեցական, թէ միութեական՝ սուրբ է, քանի որ դրա մէջ կայ նպատակ եւ Աստծու մօտ բոլորը հաւասար:

Հոգ. Հայր Սուրբը նշեց, որ այսօր տոն է, որպէսզի մենք իրար գնահատել սովորենք. մենք բոլորս ծառայողներ ենք եւ աշխատում ենք ժողովրդի համար, եւ մեշբերեց Ցիսուսի խօսքը. «Այս ինչ որ ուզում էք, որ մարդիկ անեն ձեզ, նոյնը դուք արէք նրանց»: Ապա շնորհաւորելով աշխատաւորներին մաղթեց. «Առողջութիւն՝ եթէ առողջ ես աւելին կարող ես անել, երջանկութիւն՝ եթէ երջանիկ ես աւելի ուրախ մինուրատում կաշխատես եւ սէր՝ եթէ սիրում ես աշխատանքդ, ուրեմն կաշխատես հաճոյքով եւ առանց յոզնելու: Եթէ այս բոլորն ունենաս, ապա գործի յաջողութիւն էլ

Հունենաս»:

Այնուհետեւ Շահինշահրի «Արարատ» միութեան վարչութեան նախագահ պրն. Գեղիկ Խաչատրեանը ներկաներին եւ համայնքի աշխատաւորներին շնորհաւորելով տօնի առթիւ, ցանկացաւ առողջութիւն, յաջողութիւններ աշխատանքում ու անձնական կեանքում:

Երեկոյի ընթանցքում արն. Գեղիկի գլխաւորութեամբ անցկացեց զանազան խաղ-մրցութիւններ. շնորհի նրա կազմակերպչական մեծ ծիրքի, ներկաները խաղ-մրցութիւնները դիմաւորեցին խանդավառութեամբ եւ իրենց մասնակցութիւնը բերին տարբեր տարիքի ու սեղի ներկայացուցիչներ:

Սրահում տիրում էր անկաշկանդ, շատ ուրախ եւ ջերմ մթնոլորտ: Մրցութիւնների յաղողներին յանձնելոց պատրաստուած նւէրները:

Ժամանակը շատ աննկատ անցաւ: Հաճելի երեկոյ անցկացնելով եւ իրենց հետ տանելով գեղեցիկ յուշեր, ներկաները շնորհակալութիւն յայտնեցին եւ ժամը՝ 23:00-ին հրաժեշտ տևեցին կազմակերպիչներին:



ՆՈՒՆԵԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 24-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՁԵՌՆԱՐԿ՝ ԾԱՀԻՆԵԱՀՐՈՒՄ

Հինգարթի՝ 2016 թ. մայիսի 12-ի երեկոյեան ժամը 7: 30-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» սրահում, Շուշիի ազատագրման 24-ամեակի առիթով կազմակերպել էր ձեռնարկ՝ Ռուբէն Երիտասարդական միութեան եւ համայնքի «Նարօտ» երգչախմբի նախաձեռնութեամբ:

Ձեռնարկին ներկայ էին Սպահամի հայոց թեմի թեմակալ առաջնորդ՝ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, համայնքի հոգեւոր տեսուչ հոգ. Տ. Անանիա վլրդ. Գունանեանը, արքն. Տ. Սահակ քին. Մինասեանը, Պատգամաւորական ժողովի դիմանի, Կրօնական խորհրդի, Հայ դատի գրասենեակի, Համայնքի վարչութեան ներկայացուցիչները, մի շարք հրաւիրեալներ ու համայնքի անդամներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ օրուայ հաղորդավար օրդ. Մարիա Խուլավերդեանը, ով բարի գալուստ մաղթելով ներկաներին ամփոփ անդրադարձ ունեցաւ Շուշիի պատմականին եւ այն ազատագրելու անհրաժեշտութեանը, այնուհետեւ թեմ հրաւիրեց օրուայ բանախու պրն. Գեղարդ Մանսուրեանին:

Յարգելի բանախու հանգամանօրէն ներկայացնելով Շուշին ազատագրելու հերոսական դրագը՝ իր ելոյթում ընդգծեց. «Թէ՛ իրրեւ ազգային-ազատագրական պայքարի յանդուգն նախաձեռնութիւն եւ թէ, մանաւանդ, իրրեւ ռազմական փայլուն գործողութիւն, Շուշիի ազատագրման միօրեայ յաղթական գրոհը, որ սկսեց 8 Մայիս 1992-ի գիշերը, ազգային-քաղաքական

իր նշանակութեամբ կարեւորագոյն մի դարձակէտ խորհրդանշեց հայ ժողովրդի բազմադարեան պատմութեան համար:

Շուշիի ազատագրումը նաև տնտեսական անհրաժեշտութիւն էր, ցամաքային եւ օդային ճանապարհների շրջափակման, էլեկտրաէներգիայի, գազի ու խմելու ջրի պակասի եւ Շուշից անընդհատ հրթիռակոծութիւնների պատճառով Ստեփանակերտում ու յարակից բնակավայրերում, ինչպես նաև ողջ հանրապետութիւնում կաթւածահար էր եղել տնտեսութիւնը»:



Յարգելի բանախու մատնանշելով, որ թուրքը եւ ազերին երբեք չեն փոխի իրենց հայահալած ու հայա-

կործան քաղաքականութիւնը իր խօսքն աւարտեց հետևեալ գեղեցիկ տողերով. «Շուշիի ազատազրութեան համար թափւած հայ հերոսների արիւնք արդէն դարձել է սրբազն Կտակ՝ արեամբ նւաճումը ամէն գնով պահպանելու, այլ մանաւանդ զարգացման ուղիով արմատաւորելու եւ անդառնալիօրէն հայացնելու, իբրեւ ազգային անկորչելի հարստութիւն գալիք սերունդներին աւանդ յանձնելու, որպէսզի միշտ հպարտութեամբ յիշատակւի փառքը 8-9 Մայիս 1992-ի հայ ժողովրդի բացած լուսաւոր դարաշրջանի՝ հայոց պատմութեան մերօրեայ մեծագոյն յաղթանակի»:

Բանախօսութեանը յաջորդեց համայնքի «Նարօտ» երգախմբի գեղարթեստական ելոյթը, որը Տ. Անանիա վլոյ. Գումանեանի դեկավարութեամբ կատարեց հայրենասիրական՝ ի մասնաւորի Ծուշիին նվիրած հրաշալի երգեր ու ասմունքներ:

Գեղարթեստական ելոյթի աւարտին բեմ հրահրեց յեմակալ առաջնորդը, ով բարձր գնահատելով կազմակերպիչներին, «Նարօտ» երգախմբի անդամներին, օրուայ բանախօսին եւ հանդիսավարին՝ իր հիացմունքն արտայալուց այդպիսի գեղեցիկ ձեռնարկ կազմակերպելու աղթով:

Գերշ. Սրբազն Հայրը ակնարկեց հայ ժողովրդի ամկոտրում կամքի հզօրութեանը, միասնականութեանը պատմութեան ամենածանր ու ամենադժոխակ պա-

թերին, երբ բոլորը միահամուռ, ամենայն այստախանաւութեամբ ձեռնամուխ են եղել անարդ ոսխի ունձգութիւնները դիմագրաւելու եւ հայրենի սուրբ հողից վտարելու նիդրական առաքելութեանը:



Օրուայ առիթով կազմակերպել էր նաեւ գրքի ցուցահանդէս-վաճառք եւ համեստ հիւրասիրութիւն:

Ցատկանշելի է, որ սոյն ձեռնարկին կատարած նվիրատութիւնները եւ գրքի վաճառքի ամբողջ հասոյթը յատկացւելու է արցախահայութեանը:

ՈՒԽՏԱԳՆԱՅՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՂԱԶԻՒՆԻ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Եղիա մարգարէի եւ Հոփիսիմեանց Ս. կուսանաց տօնի առիթով, Շահինշահրի հոգեւոր տեսուչ գերապ. Տ. Անանիա Ծ. վլոյ. Գումանեանի հովանաւորութեամբ, համայնքի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան վարչութիւնը 2016 թւականի մայիսի 21-22-ին երկօրեայ ուխտագնացութիւն էր կազմակերպել դէպի Ղազլինի հայոց եկեղեցի:



Շաբաթ՝ թւականի մայիսի 21-ի երեկոյեան ուխտաւորները կազմակերպիչ միութեան անդամների ուղեկցութեամբ մեկնեցին դէպի ուխտատեղի՝ յաջորդ օրուայ եկեղեցական արարողութեանը մասնակ-

ցելու համար:

Կիրակի՝ մայիսի 22-ի առաւօտեան Ղազլինի հինաւորց հայոց եկեղեցում մատուցւեց Ս. եւ անմահ Պատարագ՝ գերշ. Տ. Մակար եպս. Աշգարեանի ձեռնամբ եւ քահանայից ու դպրաց դասերի մասնակցութեամբ: Ուխտագնացութեան էին եկել նաեւ Թեհրանի եւ Նոր Ջուղայի հայ համայնքներից հաւատացեալներ: Յընթաց Ս. Պատարագի յաւոր պատշաճի քարոզեց գերապ. Հայր Սուրբը:

Հոգեպարար արարողութիւնից յետոյ հաւատացեալ ժողովուրդը Ս. Հաղորդութիւն ստացաւ:

Երկօրեայ ժամանակահատածում մասնակիցները շերմ ու հարազատ մթնոլորտում վայելեցին կազմակերպիչ միութեան նախաձեռնած նոյն հիւրասիրութիւնը:

Կիրակի երեկոյեան ուխտագնացները նորոգելով իրենց ուխտը քրիստոնէական Ս. հաւատի հետ վերադարձան Շահինշահրի:

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԻՍ ԾԱՀԻՆԸԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ- ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2016 թւականի մայիսի 25-ի երեկոյեան, Ծահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզնախակրթարանի սրահում տեղի ունեցաւ դպրոցի սաների ամավերջի համբէսը:

Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանը, արժն. Տ. Սահակ քին. Մինասեանը, Պատգամատրական ժողովի, Թեմական, Կրթական խորհուրդների, եւ Համայնքի վարչութեան ներկայացուցիչները, սաների ծնողներն ու հարազատները:



Ծրագրի բացումը կատարեց դպրոցի տեսչուին օրդ. Կարինէ Մինասքանեանը, որը բարի գալուստ մաղթելով ներկաներին՝ շնորհակալութիւն յայտնեց նրանց, դպրոցի անձնակազմի հրաւերին ընդառաջելու համար:

Յարգելի տեսչուին ամփոփ գեկոց ներկայացրեց դպրոցի կրթա-դաստիարակչական աշխատանքների մասին՝ բարձր գնահատելով ազգային իշխանութեան ցուցաբերած հովանաւորութիւնը եւ ծնողների համագործակցութիւնը:

Յաջորդի իրենց քաղցր ու անուշ ողջունի արտայայտութիւններով ներկայացան դպրոցի սաները, որոնք գեղեցկօրէն կատարեցին իրենց վստահած դերերը՝ ուրախ երգ ու տաղով եւ պարային աշխոյժ շարժումներով:

Ծրագրի յաջորդ բաժնում տեղի ունեցաւ 2015-2016 ուս. տարեշրջանի վկայա-

կաների բաշխումը՝ Սրբազն Հօր ձեռամբ եւ Թեմական ու Կրթական խորհուրդների ներկայացուցիչների ներկայութեամբ:



Վերջում տեսչուին նախ իր շնորհաւորանքի խօսքը յղեց համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Շ. վրդ. Գուճանեանին նիդրապետական նոր աստիճանին արժանանալու համար, ապա բարի երթ մաղթեց գերշ. Սրբազն Հօրը, ով Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա Վեհափառին անսալով պէտք է իր հոգեւորական ծառայութիւնը շարունակի Կանադայի հայոց թեմում:



Այնուհետեւ օրինանքի եւ գնահատանքի իր խօսքը փոխանցեց գերշ. Սրբազն Հայոց՝ լնդգետելով հայ ուսումնարանի ուղոյն եւ կարեւոր դերը՝ մատաղ սերնդի հայեցի դաստիարակութեան սրբազն գործում: Նա բարձր գնահատեց դպրոցի դաստիարակների, Ծնողական խորհրդի եւ ծնողների ցուցաբերած հոգատարութիւնն ու իրագործած աշխատանքները եւ մաղթեց նրանց քաջառողջութիւն եւ առաւել ոյժ ու կորով:

Օրուայ առիթով տեղի ունեցաւ նաև համեստ հիւրասիրութիւն:

ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 98-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

2016 թվականի մայիսի 27-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում, հանդիսաւոր արարողութեամբ նշեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան 98-ամեակը:



Սկզբում Հայաստանի Հանրապետութեան 98-ամեակի տօնակատարութեան յանձնախմբի անունից, ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ օրոյ հանդիսավար տկն. Քարմէն Մատթէոսեանը՝ հետեւեալ գեղեցիկ խօսքով.

**«Պա՛յծառ մայիս էր... Օ՛, ջինջ լուսաբաց,
Աւետեց արեւն հայոց ապագան.
Մասիսն էլ ահեղ իր ձայնով ասաց.
- Կեցցե՞ս, իմ ազատ, չքնաղ Հայաստան»:**

Որպէս օրոյ ծրագրի սկիզբ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն՝ նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի Ակադեմիական միաւորի միջոցով եւ հնչեցին Իրամի իւլամական եւ Հայաստանի հանրապետութիւնների հիմները, որից յետոյ գերշ. S. Բարգէն արք. Զարեանի նախագահութեամբ եւ համայնքի հոգեւոր տեսուց գերա. S. Անանիա Շ. Վրդ. Գումանեանի եւ արժն. S. Սահակ քհն. Մինասեանի մասնակցութեամբ կատարւեց Հանրապետական մաղթանք:



Ցաջորդիւ օրոյ առթիւ բանախօսեց ազգային վաստակաւոր գործի պրն. Թաթով Օհանեանը, ով անդրադառնալով հայ ժողովրդի՝ օտար բռնակալների դէմ մղած զինեալ պայքարին եւ պատմութեան բոլոր ժամանակների բռնութիւնների, աւերի, աւարի, գաղթի, բռնաբարումների դէմ դրսեւրած պայքարող ու մարտնչող աննկուն կամքին՝ հայ ժողովրդին բնութագրեց որպէս ազատատենչ ու ազատասէր ազգ, որը շարունակ պայքարել է օտարի լծից ազատւելու, անկախու-

թիւն ձեռք բերելու եւ սեփական անկախ պետութիւն հաստատելու համար:

Յարգելի բանախօսն իր խօսքում նշեց, որ հայն իր անկախութեան համար, թէ՛ բաղաքական աննպաստ ու թէ՛ նպաստաւոր պայմաններում որդեգրել է համապատասխան պայքարի ձեւեր, ուստի Հայաստանի Հանրապետութեան ծնունդը փաստորին հայ ժողովրդի 18-րդ դարից սկսած ազատագրական շարժումների տրամաբանական հետեւանքն էր: Այն ազատամարտի բիւրաւոր նահատակների անձեռակերտ յուշարձանն է: Եւ վերջապէս 1918 թի Մայիս 28-ը որպէս որպէս հայ ժողովրդի նոր դարաշրջանի պատմութեան լուսաւոր ու պահծական էջերից մէկը:



Օրոյ հանդիսավարի յայտարարմամբ այդ երեկոյ նաեւ հրաժեշտի եւ երախտագիտութեան օր էր: Քանի որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայուապետի կարգադրութեամբ մօս օրեւ Սպահանի հայոց թեմը թողնելու էր առաջնորդ գերշ. S. Բարգէն արք. Զարեանը՝ իր ծառայական աշխատանքը Կանադայում շարունակելու եւ սոյն երկրի հայոց թեմն առաջնորդելու համար: Մրբազն Հօրը ողջերթ մաղթելու եւ իր անբասիր ծառայական գործունեութեան առթիւ երախտիքի խօսք ասելու համար բեմ հրաիրեց Հայ Համայնքի Վարչութեան նախագահ պրն. Մելքոն Շիրանեանը:

Հնչած բարի երթի ուղերձին յաջորդեց գերա. S. Անանիա Շ. Վրդ. Գումանեանի մաղթանքը՝ ուղղած Թեմակալ Առաջնորդին, որի ընթացքում գերա. Հայր Սուրբը բնութագրեց գերշ. Սրբազն

Հօր ամիսականութեան վառ գծերը՝ ընդգծելով նրա խորհեմութիւնը, գթառատութիւնը, համբերատարութիւնն ու ազնութիւնը եւ որպէս ճշմարիտ հոգեւորական՝ ծառայական ասպարէզում նրա անքասիր նկարագիրն ու յանձնառութեան բարձր գիտակցութիւնը:



Յատկանշելի է, որ երեկոն յարմար էր նաև մի գեղեցիկ առիթ Օշելու համար, որն էր՝ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Վեհափառի ձեռամբ՝ Տ. Անահիա վրդ. Գումանեանին Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան շնորհելու առիթը:

Իրենց սրտի խօսքն արտայալստեցին գերջ. Սրբազն Հայրն ու գերապ. Հայր Սուրբը, որոնք եւս իրենց հերթին գոհունակութիւն յայտնեցին Բարձրեալին՝ իրենց այսպիսի գեղեցիկ օրերի ու առիթների վկան ու ականատեսը լինելուն արժանացնելու համար եւ օրինեցին ամբողջ թեմի՝ ի մասնաւորի համայնքի հայորդիներին ու ազգային-կրօնական կառուցներին:

Ի նշան երախտագիտութեան՝ Համայնքի կողմից պատշաճ եւ գեղեցիկ յուշանւերներ ընծայւեցին Սրբազն Հայրն ու Հայր Սուրբին:

Երեկոյին առաւել տօնական երանգ հաղորդեց Նոր Զուղայից հրաւիրած «ԱՅԻ» նագախմբի երաժշտական բարձրորակ ելոյթը, որի ազգային-հայունասիրական եւ ժողովրդական երաժշտութեան ներքոյ, բոլոր ներկաները վայելցին չերմ, աշխոյժ եւ ուրախ պահեր:

ՎԵՐՁԻՆ ՀԱՆԳԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵՎ ՀԻՆԵԱՐԻ ՀԱՅՈՒՅԱՅՑԻՆ «ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՎԱՆՅ» ԵՒ «ՄԱՍԻՍ» ԴՊՐՈՅՆԵՐՈՒՄ

Հինգշաբթի՝ 2016 թ. յունիսի 9-ի երեկոյեան, Շահին-շահիրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում կայացաւ 6-րդ եւ 9-րդ դասարանցիների «Վերջին զանգ»-ի հանդիսութիւնը՝ Հայ համայնքի վարչութեան հովանաւորութեամբ եւ կրթօջախի ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ: Ծրագրին ներկայ էին համայնքի հոգեւոր տեսառչ գերապ. Տ. Անահիա Ծ. վրդ. Գումանեանը, Համայնքի վարչութեան, Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի ներկայացուցիչները եւ ծնողները:



Ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ ուսուցչուի Վարդուի Պողոսեանը, որը «Սրբոց Վարդանանց» տարրական եւ «Մասիս» միջնակարգ դպրոցների 2015-2016 ուսումնական տարեշրջանի կրթա-դաստիարակչական գեկոյցը ներկայացնելու համար հրաւիրեց ուսուցուի Վիոլետ Յարութիւնեանին:

Այնուհետև բեմը տրամադրւեց տարրական դպրոցի աշակերտ-ուիններին, ովքեր երաժշտութեան ուսուցիչ Նարբէ Գրիգորեանի ղեկավարութեամբ մատուցեցին աշխոյժ ու խանդավառ մեներգեր ու խմբերգեր: Կատարումներին զուգակցւած էին նաև հայրենասիրական ասմունքներ:



Յաջորդիւ հարազատ դպրոցին ուղղած իրենց գեղեցիկ խօսքերով ու արտայալստութիւններով ելոյթ ունեցան միջնակարգ դպրոցի աշակերտ-ուինները:

Աշակերտ-ուինների շերմ ու բարձր գնահատանքին արժանացան նաև ուսուցչական կազմը եւ Ծնողական խորհուրդը իրենց ցուցաբերած նվիրածութեան եւ իրագործած յանձնառութեան համար:

Զերմ եւ յուգառատ արտայալստութիւններին յաջորդեց 6-րդ եւ 9-րդ շրջանաւարտների վկայագրերի բաշխումը՝ գերապ. Հայր Սուրբի ձեռամբ եւ Համայնքի Վար-

Հուլիսան, Կրթական Խորհրդի ներկայացուցիչների եւ դպրոցի փոխ-տեսուչի ներկայութեամբ:



Օրոյ աղիթով իր հայրական խօսքն ասաց գերայ. Հայր Սուրբը, ով սկզբում նախ դպրոցի պատասխանատուներին եւ շրջանաւարտներին շնորհաւորեց գեղարևստական գեղեցիկ ծրագրի կազմակերպման եւ իրականացման համար՝ գնահատելով նրանց տարած աշխատանքները, ապա խօսքն ուղղելով շրջանաւարտներին, նրանց մաղթեց յաջողութիւն եւ գիտական ասպարեզում փայլուն վերելքներ եւ նաճումներ:

«Վերջին զանգի» հանդիսութեան աւարտին, Հայոց Ցեղասպանութեան 101-ամեակի Ոգեկոչման Յանձնախմբի նախաձեռնութեամբ՝ գնահատագրերով եւ մրցանակներով գնահատուեցին նաեւ սեղանի թենիս եւ շախմատ մարզաձեւերի մրցոյթներին յաղթած մարզիկ-ուիհները:



ԲԱԶԿԱՄԱՐՏԻ ԱԽՈՅԵԱՆ ԵՒ ԻՐԱՒԱՐԱՐ ՕԾԻՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ԲԱԶԿԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՆԱՐՀԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԲԻ ՊԱՐՍԿԵՐԷՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Իրանի բազկամարտի հաւաքականի անդամ, ախոյեան եւ իրաւարար Օշին Տեր-Գրիգորեանի շերմեռանդ աշխատանքի շնորհի, առաջին անգամուայ համար իրանում, պարսկերէն լեզով իրաւարակել է բազկամարտի համաշխարհային ֆեդերացիայի կանոնների գիրքը:



Գիրքը բացադիկ հաւաքածու կարելի է համարել, ուր ընդգրկւած են բազկամարտի համաշխարհային ֆեդերացիայի կողմից սահմանած բոլոր կանոնները՝ մատչելի ու դիրքբոնելի բացատրութեամբ, ինչու չէ նաեւ համահունչ լուսանկարներով ու պատկերներով:


Այնունա անդրադարձ է կատարել յատկապէս սոյն մարզաձեւի տեխնիկա-

կան կանոններին, ինչպիսիք են՝ քաշային կարգերի, տարիքային բաժանումների եւ թիմներին առնչող կանոնները, բացատրել է նաեւ մրցասեղանի եւ յարակից մարզական սարքերի յատկութիւնների, մրցավարի իրաւասութիւնների, մրցապարարի ընդիմանուր կանոնների, կանոնազանցութիւն համարող պարագաների եւ կանոնազանց մարզիկների նկատմամբ կիրառող պատժամիջոցների մասին:

Օշինի վկայմամբ թարգմանութեան գործին օգտակար են հանդիսացել Իրանում բազկամարտի հիմնադիր Մոհամադոնզա Թաֆուշիեանի խորհուրդներն ու երկար տարիների փորձառութիւնը՝ այս ասպարեզում:

Օշին Տեր-Գրիգորեանը ծննել է 1981 թականին, Նոր Ջուղայում: Նա լող, ֆուտբոլ, գնդի հրում եւ մարմնամարզութիւն (բադիբիլիդինգ) մարզաձեւերը փորձելուց եւ այդ ճիշդերում յաջողութիւններ արձանագրելուց յետոյ, 2007 թականից մասնագիտանալով բազկամարտում երկրի մակարդակում բազմաթիւ անգամներ նաև է չենապինի եւ փոխ-չենապինի պատաւոր կոչումները: 100 կ. գ. քաշային կարգին պատկանող բազկամարտիկը 2011 թականին, Իրանի հաւաքականի հետ Ղազախստանում անցկացւող Ասիայի առաջնութեան մրցոյթում գրադեցրել է չորրորդ տեղը, իսկ 2012-ին, Գորգան քաղաքում, Շին մակարդակի մրցաշարում դարձել է ցամաքամասի հինգերորդ բազկամարտիկը: Նա ունի բազկամարտի իրաւարութեան ազգային արտօնագիր եւ իրաւարարութեամբ է հանդէս եկել երկրի մակարդակում իրականացւած բազմաթիւ մրցաշարերում: Օշինը իրաւարարութեան ասպարեզում նոյնական աչքի է ընկել իր արթեստավարժութեամբ, որի համար ստացել է գնահատագրեր: Նա 2016 թականին յաջողել է ստանալ նաեւ բադիբիլիդինգի մարզութեան առաջին կարգի արտօնագիրը:

Կանաչ ճանապարհ ենք մաղթում սիրելի Օշինին՝ ցանկանալով նրան նորանոր յաջողութիւններ ու նաճումներ:



լին Մովսեսեան, Մասիս Հայրապետեան, Սոնիկ Կիրակոսեան, Մուշեղ Փանոսեան, Արմինե Խախանեան, Սեղիկ Բալեան, Մասիս Մինասեան, Թաթոռ Օհանեան, Անդրէ Մարկոսեան, Մարտիկ Տէր Ցովհաննիսեան, Արգամ Ցովսէփեան, Առաքել Սիմոնեան, Շահեց Թահմազեան, Զարեհ Եւ Սեւանայ Ղարախանեաններ, Արգամ Ցովհաննիսեան, Վազգէն Աղասեան, Տանիա Վարդանեան, Հերմինէ Բարպյեան, Հայկազ Թահմազեան, Անուշ Ցովհաննիսեան, Դամիկ Հայրապետեան, Զորիկ Ցովսէփեան, Տիգրանուիր Մանսորեան, Շանթ Արգարեան, Հայդուկ Մովսեսեան, Վերգինէ Միրզախանեան, Ալֆրէդ Միրզայեան, Սեդա Ալյազեան, Զաւեն Կիրակոսեան, Արամ Մանսորեան, Մատիքա Կարապետեան, Կարօ Խուդաբախչեան, Համիկ և Արդիմ Ալեքսանդրեաններ, Ծաղկոչ Մկրտչեան, Մանուշ Ծատուրեան, Այինդա Կիրակոսեան, Նազեկի Աւետեան, Էդմինէ Բաղդասարեան, Արա Ներսիսեան, Թէօ Շահիջանեան, Ալվարդ Զարգարեան, Նորիկ Ցարութինեան, Դավթիկ Ցովսէփեան, Հմայեակ Թահմազեան, Ալյազբայեան ընտանիք, Միգանուշ Սիմոնեան, Սոնիկ Բաղրումեան, Վարուժ Վարդանեան, Տիգրանուիր Մանսորեան, Սեւակ Խաչատրեան, Արտեմ Մորոսեան, Վազրիկ Եւ Քառոյին Վարդանեաններ, Սար Դիլանչեան, Արթին Հայրապետեան, Պողոս Թահմազեան, Գառնիկ Բաղրամասարեան, Նուէլ Եւ Անդրուիր Մինասեաններ, Պողոս Թահմազեան, Գառնիկ Բաղրամասարեան. ոմն

- 600,000 դիմ. Վարհիկ Մկրտչեան
- 500,000-ական դիմ. Տ. Խաչատուր քինց. Զարգարեան, Տաթեկի Աղաջանեան, Կարո Կարապետեան, Լուսիա Գալստեան,
Սօսւ Պողոսեան, Հերմինէ Վարդանեան, Մելքոն Շիրամեան,
Րաֆֆի Ալեքսանդրեան, Վարոն Մատթեոսեան, Հայկ Սարգսեան,
Անահիտ Խաղովշեան, Կարո Ղարախանեան, Վահիկ Օրօջեան,
Մալոս Յովսէփեան, Սարո Շահիջանեան, Լուսինէ Թահմազեան,
Մարո Բաղրամեան, Սոնա Եւ Քրիստ Եւ Գևորգ, Վազգէն
Միրզայեան, Համազասպ Պողոսեան, Արթին Մեսրոպեան, Նի-
ելիսա Բաղդասարեան, Ֆրէդ Պողոսեան, Հրաշ Տէր-Ցովհաննի-
սեան, Վանայ Եւ Վանանդ Շիրամեան, Հայդոկ Կարապետեան,
Յովիկ Մկրտչեան, Կարինէ Զարգարեան, Վարդան Մկրտչեան,
Ալեքս Յովսէփեան, Արթուր Ալեքսանդրեան, Շահիկ Մատթեո-
սեան, Ռազմիկ Տէր Գրիգորեան, Իշխան Թահմազեան, Աղրինէ
Ղետեան. Առիհան Դամետեան. Լաւա Արախանեան. Էմանուէ

Սիրահանեան, Սեպուհ Պետրոսեան, Մարիամ Միհնասեան, Ադրի-
լէ Քեշիշյան, Շողյկ Վարդանեան, Աստիկի Մարկոսեան, Արսի-
լէ Մանսուրեան, Վարդեւանեան ընտանիք, Եսթեր Բաղրամյեան,
Էմիլի Խաչիկ-Գրիգորեան, Արմին Թորոսեան, Սիլվ Յովկ-
փեան, Գեորգ Քեշիշյան, Արթին Ղարախանեան, Սեւան Ղազա-
րեան

- 400,000 դիալ. Արևնէ Ուղուղեան
 - 300,000-ական դիալ. Անդրուշի Յովսէփեան, Մելանիա
Յովսէփեան, Նարէ Ասատրեան
 - 200,000-ական դիալ. Ծովիկ Խախիանեան, Արուեակ Շահ-
բագեան, Սերիկ Անդրիասեան, Արշալոյ Սահակեան, Անահիտ
Այսազեան, Վաչէ Ղարիբեան, Շուշիկ Փանոսեան, ոմն
 - 150,000 դիալ. Թահմազեան
 - 100,000-ական դիալ. Շահբաղսան Ինջովի, Էդվարդ Թահ-
մազեան
 - 50,000 դիալ. Ժերմէն Թորոսեան

Սպահանի հայոց թեմի Բարեսիրական մարմին

- 5,000,000 դիմ. Թելմա Եւ Նարինէ Հայրապետուաներ՝ Ժորդ Հայրապետուանի մահման քառամասորեակի ատթի.

Հայոց ազգ. գերեզմանաթան բարեկարդման մարմին

- 500,000 դիմ. Յարօ Այլազեան՝ Հայրիկ Կարապետեանի լիշտառակին

Հայ Դատի Նոր Չուղայի յանչնախումբ

- 5,000,000 դիմումի ջանահրետան Համօ Մկրտչեանի լիշտառակին

Πιηηπι.-

- «Տեղեկատու»-ի նախորդ համարի մէջ Ն.Զ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոցի անդամ ներքյա նշան «Աւարտական ծրագրի առթիվ» նկարագրութիւնների վերնագիրը պէտք է լինի «Քանանեան» եւ «Կարտարինեան» դպրոցների 2014-2015 ուսումնական տարեցրանի աւարտական ծրագրի առթիվ»

Առաջնորդարանին եւ ազգային կառույցին առլինչ-
տող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում
է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրա-
սենեակը, համայնքային եւ կրօնական արարողու-
թիւններին՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ»
Միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահնշահրի
հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան
մասնաճիւղինը՝ Վիոլեթ Ցարութիւնեանը եւ Աի-
դա Մուրադեանու:

Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեղիկ Խաչատրեանը:

خليفة گرى ارامنه اصفهان و جنوب ايران
صندوق پستى ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran

WWW.Norjughha.ir
WWW.Vank.ir

E-mail: Sourby@Yahoo.com

